ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ

ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐ



ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

[P504282]

ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ

[ՓԵՏՐՎԱՐ 14, 2025]

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

1.1. Ծրագրի նկարագրություն 6

1.1.1 Գործունեություն/Բաղադրիչներ 6

1.1.2 Իրականացնող գերատեսչություններ 12

1.2. Շահակիրների ներգրավման պլանի նպատակն ու ծավալը 14

1.3. Սկզբունքները 16

1.4. Սահմանափակումներ 18

2. ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 24

2.1. Հիմնական սահմանումներ եւ շահակիրների խմբեր 24

2.2. Պոտենցիալ ազդակիր կողմեր 25

2.3. Այլ հետաքրքրված կողմեր 30

2.4. Անապահով կամ խոցելի խմբեր 32

2.5. Ներգրավման եղանակները 33

3. ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 36

3.1. Շահակիրների ներգրավման գործունեության ամփոփում ծրագրի նախապատրաստման եւ իրականացման ընթացքում 36

3.2. Գենդերային հիմնախնդիրների ուսումնասիրությունը եւ քաղաքացիների ներգրավումը Ծրագրի նախապատրաստման փուլում 36

3.3. Տեղեկատվության հանրայնացում 37

3.4. Միջոցներ եւ պատասխանատվություն 40

3.4.1 Կառավարման գործառույթներ եւ պատասխանատվություն 40

3.4.2 Միջոցներ 41

4. ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄ 42

4.1. ԲՄ-ի ընդհանուր նկարագրություն 42

4.2. Բողոքների փակումը 43

4.3. Բողոքների գրանցում եւ փաստաթղթավորում 46

4.4. ԲՄ-ի ներկայացումը շահակիրներին 46

4.5 Սեռական շահագործման եւ չարաշահման/Սեռական ոտնձգությունների հետ կապված բողոքներ 47

4.6 Բողոքի լուծումը 47

Հավելված 1. Կլաստերների ընտրության փուլում իրականացված հանդիպումների նկարներ 48
Հավելված 2. Շահակրիների ներգրավման գործողություններ 49
Հավելված 3. ԲՄ տեղական համակարգողների եւ ԲՄ համակարգողների կոնտակտային տվյալներ 56
Հավելված 4. ՇՆՊ բյուջե 57

Հապավումներ

ԱԱ	Առողջություն և անվտանգություն
ԱԱԱ	Աշխատանքային առողջություն և անվտանգություն
ԱԻԱԲ	Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչ
ԱԿԸ	Աշխատանքի կառավարման ընթացակարգեր
ԱՀԿ	Աշխատանքի համաշխարհային կազմակերպություն
ԱԱՏՄ	Առողջության և աշխատանքի տեսչական մարմին
ԲԸՏՄ	Բնապահպանության և ընդերքօգտագործման տեսչական մարմին
ԲԼՄ	Բողոքների լուծման մեխանիզմ
ԲՄ	Բողոքների մեխանիզմ
ԲՍԳ	Բնապահպանական և սոցիալական գնահատում
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍՇ	Բնապահպանական և սոցիալական շրջանակ
ԲՍԱԱ	Բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության
ԲՍԿՇ	Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ
ԲՍԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԲՍՍ	Բնապահպանական և սոցիալական ստանդարտ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԶԿ	Զբոսաշրջության կոմիտե
ԶՄԵԾ	Զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԻԿ	Իրականացնող կազմակերպություն
ԾԳՄ	Ծրագրի գործադիր մարմին
ԾԻՄ	Ծրագրի իրականացման մարմին
ԿԶԾ	Կլաստերի զարգացման ծրագիր
ԿՊՀՀ	Կենսապահովման պայմանների համապարփակ հետազոտություն
ՀԱՀ	Հայաստանի Ամերիկյան Համալսարան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԲՄ	Հետադարձ կապ և բողոքների լուծման մեխանիզմ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿՀ	Համայնքային կապի համակարգող
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետության կառավարություն

ՀՄԿ	Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԶԳ	Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ՄՊ	Մշտադիտարկման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԱԳԿ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն
ՆԾՖ	Ներդրումային ծրագրի ֆինանսավորում
ՇՆՇ	Շահակիրների ներգրավման շրջանակ
ՇՆՊ	Շահակիրների ներգրավման պլան
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊԱԹՊՄՊԾ	Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏԿԶ	Կայուն տարածաշրջանային (զբոսաշրջային) զարգացում
ՏՏԵԶԾ	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր
ՏՔՇ/ՏՇ	Տարաբնակեցման (քաղաքականության) շրջանակ
ՈՒԿԳ	Ուղղության կառավարման գրասենյակ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի զբոսաշրջության եւ մարզային ենթակառուցվածքների ծրագիրը (ԶՄԵԾ) կաջակցի **Արենիի, Դիլիջանի, Դվինի, Գորիսի, Գյումրիի, Ջերմուկի ու Եղեգիսի** յոթ առաջնահերթ կլաստերներում կայուն, ներառական և կլիմայական ինչպես նաև բնական աղետների հանդեպ ճկուն զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներին և միջամտություններին: Հիմնական միջամտություններն ուղղված են կլաստերներից յուրաքանչյուրում զբոսաշրջության զարգացման հիմնական սահմանափակումների վերացմանը, ներառյալ հիմնական և որակյալ ենթակառուցվածքների և ծառայությունների բացակայության հարցի լուծումը, ինչպես նաև առաջարկները դիվերսիֆիկացնելու և ՀՀ կառավարության կլաստերային մոտեցման ներքո բացահայտված համապատասխան հիմնական խորշերը զարգացնելու անհրաժեշտությունը: Առաջարկվող Ծրագիրը նաև կհետևի և կհիմնվի Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ընթացիկ ծրագրի (ՏՏԵԶԾ) շրջանակներում իրականացվող ներդրումների, փորձի և քաղված դասերի վրա:

Սույն **Շահակիրների ներգրավման պլանը** (ՇՆՊ) պատրաստվել է շահակիրների ներգրավման աշխատանքներն ուղղորդելու նպատակով՝ թե՛ Ծրագրի նախապատրաստման և թե՛ իրականացման ընթացքում: Սույն ՇՆՊ-ն ենթակա է հանրայնացման և բաց է խորհրդատվության և հետադարձ արձագանքի համար:

1.1. Ծրագրի նկարագրություն

1.1.1 Գործունեություն/Բաղադրիչներ

ԶՄԵԾ-ը բաղկացած է չորս ինտեգրված բաղադրիչներից, որոնք միասին կնպաստեն կլիմայական առումով դիմացկուն ենթակառուցվածքների հասանելիության բարելավմանն՝ ի շահ տեղական համայնքների և այցելուների, բարձրացնելով ընտրված վայրերի գրավչությունը, հնարավորություն տալով ստեղծել աշխատատեղեր և ավելացնելով տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության հատվածի ներդրումը:

Բաղադրիչ 1 – «Ինտեգրված եւ կայուն կլաստերի զարգացման խթանումը» կֆինանսավորի տեխնիկական աջակցությունը (ՏԱ), խորհրդատվական ծառայությունները, ապրանքներն ու սարքավորումն ի թիվս այլոց, և առնչվող վերլուծական և տեխնիկական ուսումնասիրությունների աշխատանքները՝ կլաստերի զարգացման ծրագրերի (ԿԶԾ) մշակման և իրականացման համար: ԿԶԾ-երը կօգնեն ղեկավարել ինտեգրված և կայուն զարգացումը և կներառեն կլաստերի ընդհանուր տեսլականը 10-ամյա պլանավորման հորիզոնում, ներառյալ զարգացման մանրամասն պլանները, որոնք ներառում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր՝ կապիտալացնելու յուրաքանչյուր կլաստերի զբոսաշրջության զարգացման ներուժը և աշխատանքի ստեղծումը: ԿԶԾ-երը կհաստատվեն Ծրագրի կառավարման կոմիտեի (ԾԿԿ)[1] կողմից և կծառայեն որպես ուղեցույց՝ համապատասխան կլաստերների ներքո միջամտությունների

[1] ԾԿԿն նախագահում է փոխվարչապետը, ԾԿԿնկազմությունը ներկայացված է «Բաժին III. Ծրագրի իրականացում» հատվածում:

առաջնահերթության համար, ներառյալ դրանց ընդհանուր կառավարումը, ինչպես նաև շահագործման ու պահպանման դրույթները: Այս բաղադրիչով նախատեսվում են տեխնիկական աջակցության հետևյալ հիմնական գործողությունները, որոնք ներառում են.

(ա) Դիլիջանի, Դվինի, Գորիսի, Ջերմուկի և Եղեգիսի ԿԶԾ-երի մշակումը և վերջնականացումը, որը կհաստատվի ԾԿԿ-ի կողմից[2]: ԿԶԾ-երը նաև հաշվի կառնեն կանաչ, ճկուն և ներառական զարգացման մոտեցումները, քաղաքային և տարածքային պլանավորումը և համապատասխանությունը գործող մարզային և համայնքային զարգացման ծրագրերին: Պահանջարկի գնահատումը և տնտեսական վերլուծությունը կիրականացվեն որպես ԿԶԾ մշակման մաս, և կլաստերների զարգացման առաջնահերթությունները կընտրվեն տեղական համայնքների, բիզնեսի և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ՝ մասնակցային մոտեցումների միջոցով: ԿԶԾ-երը կընդգրկեն կլիմայական առումով զգայուն գործողությունների պլաններ, որոնց միջոցով կլաստերների համար կընտրվեն ցածր ածխածնի առաջացմամբ և հարմարվողական ներդրումների տարբերակներ[3]: ԿԶԾ-երը նաև նպատակ կունենան առավելագույնի հասցնել կլաստերների շրջանակում զբոսաշրջության և առնչվող ոլորտներում զբաղվածության ներուժը: ԿԶԾ-երի առաջնահերթ միջամտությունները կիրականացվեն Բաղադրիչ 2-ի շրջանակներում:

(բ) Կլիմային և աղետներին դիմակայուն գոտիավորման և գլխավոր պլանների, ներդրումների պլանավորման ուսումնասիրությունների և այլ վերլուծական աշխատանքների պատրաստում (օրինակ՝ տեխնիկատնտեսական հիմնավորումները), որոնք անհրաժեշտ են ԿԶԾ-երի պատրաստման, մշակման և վերջնական տեսքի բերելու համար:

(գ) Հանրային իրազեկման արշավներ և առնչվող քաղաքացիների ներգրավման գործողություններ ԿԶԾ-ների պատրաստման ընթացքում և դրանից հետո՝ խթանելու տեղական սեփականության իրավունքը, հագեցնելու ապագա քաղաքային և տարածքային պլանավորումը տեղեկություններով, աջակցելու որոշումների կայացմանը:

(դ) Ընտրված զբոսաշրջային ակտիվների և մշակութային ժառանգության վայրերի համար տեղամասի կառավարման և/կամ գործառնական և սպասարկման պլանների մշակում՝ աջակցելու բնական, մշակութային և սոցիալական ակտիվների մշտադիտարկմանը և պահպանմանը՝ երկարաժամկետ կայուն գործունեության և զբոսաշրջային ակտիվների կառավարման համար:

(ե) Հարցումների և զբոսաշրջության տվյալների հավաքագրման այլ գործողությունների իրականացում անանուն տեղեկատվության հավաքագրման նպատակով՝ տեղեկություններով համալրելու տեղական զբոսաշրջության վիճակագրությունը զբոսաշրջության շահագրգիռ կողմերի միջոցով, ինչպիսիք են Զբոսաշրջության կոմիտեն, Ուղղությունների կառավարման գրասենյակները (ՈՒԿԳ) և զբոսաշրջության այլ շահագրգիռ կողմերը:

---

[2] Արենիի ԿԶԾն մշակվել է ՏՏԵԶԾի շրջանակներում, իսկ պրոենցիպ ներդրումները նախագծվել են ՋՄԵԾի շրջանակներում, երբ ծրագիրը մեկնարկի: Գյուղերու համար ՋՄԵԾն կօգտագործի արդեն մշակված գյուղական զարգացման ռազմավարությունները և զարգացման ծրագրերը, և նոր ԿԶԾչի մշակվի:

[3] Տես նաև Բաժին IV. Ծրագրի գնահատման ամփոփում: Ծրագրի գնահատման փաստաթղթում Գարիզի համաձայն նպատակի հետևողականություն.

(զ) Աջակցություն Արենի, Դիլիջան, Եղեգիս և Ջերմուկ կլաստերներում ՈԻԿԳ-ների ստեղծմանը և/կամ գործունեությանը՝ դասընթացների և ներուժի զարգացման, ապրանքների և սարքավորումների տրամադրման միջոցով:

(է) Առաջնորդների վերապատրաստման միջոցառումներ և զբոսաշրջության արժեքային շղթայում կանանց տեղական մասնակցության խթանում՝ որոշումներ կայացնող մարմիններում առաջնորդի դեր ստանձնելու համար, այդ թվում՝ Ծրագրի շրջանակներում Տեղական աշխատանքային խմբերում (ՏԱԽ)[4] ներկայացվածության ընդլայնման միջոցով, ինչպես նաև աջակցություն կանանց՝ անհրաժեշտ կարողությունների զարգացման և հմտությունների ընդլայնման միջոցով:

Բաղադրիչ 2 – «Աջակցություն կլիմայական առումով ճկուն ենթակառուցվածքներին եւ տեղական տնտեսության մեջ մասնավոր հատվածի մասնակցության խթանում» բաղադրիչը նպատակ ունի վերացնել

ԿՁԾ-երով հայտնաբերված հիմնական ծառայությունների տրամադրման, ինչպես նաև մարզային զբոսաշրջության զարգացման տեսակետից ծառայությունների բացերն առաջնահերթ յոթ կլաստերներում: Այս բաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունների ընտրությունը կհիմնվի 1-ին բաղադրիչի ներքո մշակված և վերջնականացված ԿՁԾ-երի վրա: Այս բաղադրիչը կֆինանսավորի ինժեներական, տեղանքի և այլ տեխնիկական գնահատումները, տեխնիկատնտեսական հիմնավորումները (ՏՏՀ), ճարտարապետական և մանրամասն ինժեներական նախագծերը և շինարարական աշխատանքները: Բաղադրիչը ներառում է հետևյալ ենթաբաղադրիչները.

Ենթաբաղադրիչ 2.1. «Ենթակառուցվածքների եւ ծառայությունների վերականգնում եւ արդիականացում» ենթաբաղադրիչը կֆինանսավորի խորհրդատվական և շինարարական աշխատանքները՝ կատարելով միջամտություններ ուղղված հիմնական ենթակառուցվածքների բարելավմանը և քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, կենսունակության բարձրացմանը և զբոսաշրջային վայրերի և հարակից տարածքների հասանելիության բարելավմանը: Ամբողջ ենթակառուցվածքը նախագծվելու և ներդրվելու է կլիմայական և աղետների ռիսկերին, այդ թվում ՝ երկրաշարժերին դիմակայելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության նորմերին շինարարական չափանիշներին հաշվի առնելով համաշխարհային լավագույն փորձը: Բաղադրիչի շրջանակներում ներդրումները կներառեն, բայց չեն սահմանափակվի հետևյալով[5].

(ա) Ճանապարհների և տրանսպորտի հետ կապված ենթակառուցվածքների որակի և վիճակի բարելավում, ներառյալ կանաչ և էկոլոգիապես մաքուր փոխադրամիջոցներ այլընտրանքային ձևերի (օրինակ՝ հասարակական տրանսպորտի համակարգեր, ինչպիսիք են ճոպանուղիները, էլեկտրական ավտոբուսները, հեծանիվները և այլն) խթանումը: Այս գործունեությունը կներառի ճանապարհների և կամուրջների կառուցում, վերականգնում / բարելավում և / կամ սպասարկում, հետիոտնային գոտիների ընդլայնում, փողոցների

[4] ՏԱԽերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ինստիտուցիոնալ և իրավական միջոցառումները» բաժին III. Ծրագրի իրավականացում:

[5] Յուրաքանչյուր կլաստերում միջամտությունների հնարավոր ցանկը և դրանց պարտադիրությունը ներկայացված է Հավելվածում 2-ում:

ձևավորում և լուսադիոդային լուսավորության տեղադրում և կանաչ ենթակառուցվածքի այլ տարրերի օգտագործում՝ կլիմայական առումով ճկունության ապահովման և փողոցների, մոտեցնող ճանապարհների և ավտոկայանատեղերի գրավչության բարելավման նպատակով: Ներդրումները նախագծված կլինեն ազգային չափանիշներին համապատասխան և հաշվի կառնեն հաշմանդամության ներառման գլոբալ լավագույն փորձը, ինչպես նաև կլիմայի և աղետների դիմակայունության բարելավումը (օրինակ՝ հեղեղումների մեղմացման և էրոզիայի վերահսկման միջոցառումների ներդրում): Բարելավումները կներառեն նաև հասարակական փոխադրամիջոցները՝ բարելավելու մուտքը դեպի զբոսաշրջային վայրեր, կայանատեղիները և հետիոտների հետ կապը՝ խրախուսելով մուտքը դեպի հիմնական տեսարժան վայրեր առանց շարժիչի փոխադրամիջոցներով:

(բ) Հիմնական ենթակառուցվածքների և ծառայությունների արդիականացում և քաղաքային ենթակառուցվածքների վերականգնում, ներառյալ առկա տեղական ջրամատակարարման բարելավումը. կոյուղու համակարգերի, կեղտաջրերի հավաքման և հեռացման համակարգերի վերականգնում և արդիականացում և բարելավումներ՝ հեղեղաջրերի պատշաճ կառավարման համար:

Ենթաբաղադրիչը նաև կաջակցի հեռահաղորդակցության ենթակառուցվածքի վերականգնմանը և/կամ արդիականացմանը՝ տեղական համայնքների և ձեռնարկությունների թվային հասանելիությունն ու կապը բարելավելու համար:

(գ) Հասարակական վայրերի և տարածքների գրավչության բարձրացում, ներառյալ կանաչ տարածքների վերականգնումը և/կամ ընդլայնումը, հանրային պարկի բարելավումը, փողոցների կանաչապատումը և համապատասխան քաղաքային հարմարությունների ապահովումը՝ զբոսաշրջային բավարար փորձին համապատասխանելու համար:

(դ) Զբոսաշրջությանն առնչվող ենթակառուցվածքների և ծառայությունների տրամադրում, ներառյալ զբոսաշրջային հարմարությունների կառուցումը կամ վերականգնումը, ինչպիսիք են ուղղությունների կառավարման գրասենյակները և թանգարանները, և մշակութային ժառանգության արժեքների պահպանումն ու բարելավումը: Հարմարությունների վերականգնման առումով գերապատվություն կտրվի էներգաարդյունավետության բարելավմանը, և բոլոր նորակառույց շենքերը կհամապատասխանեն էներգաարդյունավետության չափանիշներին, որոնք առնվազն համահունչ են Առավել արդյունավետ չափանիշներով գերազանցության նախագծին (1) (EDGE-մակարդակ): Նախագծերը կներառեն նաև թափոնների նվազեցման նկատառումներ՝ օգտագործելով ցածր ածխածնային նյութեր և բարձրացնելով ջրի օգտագործման արդյունավետությունը:

ե) Աջակցություն Հանրային-մասնավոր ներդրումներին (ՀՄՆ), որը ներառում է մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով լրացուցիչ հանրային ենթակառուցվածքների բարելավման ապահովում: Այս գործունեությունը կապահովի հանրային ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են առևտրային ներդրումների կենսունակությունը ապահովելու համար, ինչպիսիք են նոր կամ վերականգնված հարակից

հանրային օբյեկտները, ճանապարհներն ու փողոցները, ջուրը և սանիտարական համակարգը և հեռահաղորդակցությունը[6]: Հիմնվելով մասնավոր հատվածի կազմակերպությունների ցուցաբերած հետաքրքրության և հանձնառության վրա՝ այս գործունեությունը նպատակաուղղված կլինի նպաստել ավելի լայն տնտեսական զարգացման և առևտրային ներդրումների կուտակման բարենպաստ միջավայրին:

ՀՄՆ ներդրումների բացահայտման, ընտրության և մշակման հատուկ ընթացակարգերը կներկայացվեն Ծրագրի կառավարման ձեռնարկում (ԾԿՁ):

ԿԶԾ-երի վերջնականացումը նախապայման չէ Բաղադրիչ 2-ի շրջանակներում գործողություններ սկսելու համար: Մինչ ԿԶԾ-երը պատրաստվում են, բաղադրիչ 2-ի համար իրավասու ենթածրագրերի տեսակը սահմանափակվում է ներդրումներով, որոնք շահավետ կլինեն համայնքի և զբոսաշրջության զարգացման համար՝ անկախ ԿԶԾ-ի վերջնական արդյունքներից, այսինքն՝ ներդրումների հետ կապված «ոչ մի ափսոսանք» չի կարող լինել: Հնարավոր «առանց ափսոսանքի» ներդրումները նկարագրված են Հավելված 2-ում:

Ենթաբաղադրիչ 2.2. Մասնավոր հատվածի մասնակցության խթանումը, մասնագիտական հմտությունների բարձրացումը եւ աշխատատեղերի ստեղծման հնարավորությունը (5 մլն ԱՄՆ դոլար) կֆինանսավորի խորհրդատվական ծառայությունները կլաստերների առաջմղման և տեղական տնտեսական զարգացման և զբոսաշրջության ոլորտում տեղական ընկերությունների և անհատների մասնակցության խթանման նպատակով: Առաջարկվող գործողությունները կներառեն.

(ա) Բրենդինգի, շուկայավարման և խթանման գործողություններ զբոսաշրջության արժեքային շղթայում:

(բ) Հանրային մասնավոր համագործակցության (ՀՄՀ) խթանում, ներառյալ ԿԶԾ-երի շրջանակներում բացահայտվող պոտենցիալ կենսունակ ՀՄՀ-ների գնահատումը, նախագծումը և պատրաստումը, օրինակ՝ զբոսաշրջության հետ կապված հասարակական տրանսպորտի համակարգերի շահագործման և պահպանման երկարաժամկետ պայմանավորվածությունների անհրաժեշտությունը (օրինակ՝ Դիլիջանում քննարկվող ճոպանուղու համակարգի առաջարկը):

(գ) Զբոսաշրջության և առնչվող բիզնեսում ներգրավված տեղացի աշխատողների համար HoReCa (հյուրանոց, ռեստորան և սննդի ծառայություններ) ոլորտում մասնագիտական հմտությունների զարգացումը՝ առաջնահերթություն տալով խոցելի և անապահով խմբերին (օրինակ՝ կանայք, երիտասարդները և խոցելի խմբերը, որոնք կարող են չունենալ անհրաժեշտ հմտություններ, ֆինանսական հնարավորություններ և աշխատանքային հնարավորություններ): Սա կներառի նաև զբոսաշրջության ոլորտի մասնագետների թիրախային թվով մասնագետների որակավորման բարձրացման ծրագրերի մշակումն ու իրականացումը:

[6] Առաջարկների ներկայացումը, ընտրությանը ընթացակարգերը և հաստատման չափանիշները կհստակեցվեն Ծրագրի կառավարման ձեռնարկում:

(դ) Աշխատանքի վայրում ուսուցում (օրինակ՝ ռեստորանային և խոհարարական ուսուցում) և ֆորմալ ուսուցում (օրինակ՝ HoReCa սերտիֆիկացման ծրագրեր), որոնք պետք է մշակվեն և իրականացվեն ոլորտում ակտիվ ընտրված գործընկերների հետ[7]:

(ե) Տեղական զբոսաշրջային ընկերությունների և ձեռնարկատերերի համար դասընթացների և կարողությունների զարգացման այլ միջոցառումների իրականացում, որոնք ներառում են կանանց նախասիրությունները, կարիքները և նախագծային ներդրումները՝ մասնակցային գենդերային ընդգրկուն գործընթացի միջոցով:

(զ) Ուսումնասիրությունների և վերլուծական աշխատանքների մշակում՝ նախագծելու, աջակցելու իրականացմանը և/կամ մշտադիտարկելու գործողությունները՝ զբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի ստեղծումը կլաստերների շրջանակներում խթանելու նպատակով, ներառյալ պոտենցիալ միջամտությունների բացահայտումը, որոնց Ծրագիրը կարող է սատարել:

(է) Թվային գործիքների մշակում և/կամ առաջխաղացում, ինչպիսիք են ծրագրային հավելվածները, օրինակ՝ տրանսպորտի տարբերակների, իրադարձությունների, փառատոնների օրացույցների, մատչելի հարմարությունների, արշավային արահետների և տուր կազմակերպիչների մասին՝ իրական ժամանակում տեղեկատվություն տրամադրելու համար:

Բաղադրիչ 3 - Ծրագրի կառավարման եւ գործառնական աջակցության (4,5 մլն ԱՄՆ դոլար) բաղադրիչը կֆինանսավորի ծրագրի կառավարման ընդհանուր ծախսերը՝ կապված գործառնական գործունեության, խորհրդատվական ծառայությունների, ոչ խորհրդատվական ծառայությունների, տրանսպորտային միջոցների, ապրանքների և հաղորդակցության, իրազեկման և վերապատրաստումների ծախսերը: Այն կֆինանսավորի ծրագրի իրականացման գործակալության ծախսերը կապված կառավարման գործառույթների հետ և կապահովի, որպեսզի Ծրագիրը համապատասխանի Բանկի պահանջներին՝ կապված բնապահպանական, սոցիալական, ֆինանսական, աուդիտի և տեխնիկական չափորոշիչների հետ, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման խորհրդատվական ընկերության ծախսերը՝ աջակցելու և ընդլայնելու իրականացնող գործակալության առկա ՄԵԳ համակարգերի կարողությունները: Բաղադրիչը նաև նպատակ ունի ընդլայնել ծրագիրն իրականացնող գործակալության՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարողությունները՝ վերապատրաստման և գիտելիքների փոխանակման միջոցառումների միջոցով:

Բաղադրիչ 4 - Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչ (ԱԻԱԲ). Զրո դոլար արժողությամբ այս բաղադրիչը թույլ կտա արագորեն վերաբաշխել Ծրագրի չհատկացված միջոցները հրատապ կարիքների համար աղետի (երկրաֆիզիկական, կլիմայական կամ տեխնածին) կամ հանրային առողջության արտակարգ իրավիճակների դեպքում: Նման իրադարձությունները կարող են ներառել ջրհեղեղներ, երկրաշարժեր, երաշտներ և հիվանդությունների բռնկում: ԱԻԱԲ-ի համար համաձայնեցված գործարկիչը հնարավորություն կտա վերաբաշխել Ծրագրի չհատկացված միջոցները Ծրագրի այլ բաղադրիչներից՝ աջակցելու

[7] Տես «Ծրագրի նկարագրությունը» ենթաբաժինը «Ե Գործընկերների դերը»՝ գործընկերների հետ առաջարկվող լրացուցիչ գործողությունների և մանրամասնված ծրագրեր տրամադրելու վերաբերյալ մանրամասների համար:

անհապաղ արձագանքման և վերականգնման կարիքներին: Իրավասու գործողությունների ցանկը կհստակեցվի ԱԻԱԲ ձեռնարկում, որը պետք է պատրաստվի նախքան Ծրագրի արդյունավետությունը, և հատկացումները կիրականացվեն կարևորագույն ապրանքների, շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների դրական ցուցակի դիմաց, որոնք անհրաժեշտ են անհապաղ արձագանքման և վերականգնման կարիքներին աջակցելու համար:

1.1.2 Իրականացնող գերատեսչություններ

Էկոնոմիկայի նախարարությունը (ԷՆ) կապահովի Ծրագրի վերաբերյալ ընդհանուր որոշումների կայացումը եւ կիրականացնի ռազմավարական ղեկավարումը: Զբոսաշրջության կոմիտեն (ԶԿ), որը գործում է ԷՆ-ի ներքո, ծառայում է որպես երկրում զբոսաշրջության զարգացման և խթանման մանդատ ունեցող առաջնային պետական գործակալություն: Իր այս ներուժով ԶԿ-ն կարևոր դեր կխաղա ծրագրի շրջանակներում ներդրումների ձևակերպմանն ու բացահայտմանն աջակցելու գործում և կլինի ԷՆ-ի գլխավոր գործընկերը, որը պատասխանատու է Ծրագրի համակարգմանն ու քաղաքականությանն աջակցելու համար:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) ծառայելու է որպես Ծրագրի իրականացման գործակալություն: ՀՏԶՀ-ն պատասխանատու կլինի Ծրագրի բոլոր գործողությունների և հավատարմագրային պարտականությունների կատարման համար, ներառյալ գնումների և ֆինանսական կառավարումը, բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) մշտադիտարկումը, ինչպես նաև տեխնիկական գնահատման, նախագծման և շինարարական աշխատանքների հետ կապված բոլոր պարտականությունները, ներառյալ աշխատանքների վերահսկումը, մշտադիտարկումն ու գնահատումը (ՄևԳ) և հաշվետվությունների պատրաստումը:

1.1.3 Շահակիրների ներգրավման նախնական աշխատանքներ Ծրագրի նախապատրաստման ընթացքում[8]

Ծրագրի նախապատրաստման ընթացքում ԶԿ-ն իրականացրել է շահագրգիռ կողմերի ներգրավման գործողություններ և խորհրդատվական հանդիպումներ՝ նպատակ ունենալով նախապես ընտրելու Ծրագրում ընդգրկվող կլաստերները: Խորհրդատվական հանդիպումներ են տեղի ունեցել Հայաստանի մի քանի մարզերում, քաղաքապետարանների, տեղական զբոսաշրջության ոլորտի, զբոսաշրջային ՈՒԿԳ-ների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնակցությամբ (խորհրդատվական հանդիպումների մեկ շրջանի նկարները ներկայացված են Հավելված 1-ում): Այս խորհրդակցություններն ու քննարկումները տեղական իշխանությունների, համայնքների ներկայացուցիչների և տեխնիկական փորձագետների հետ օգնեցին ուղղորդել յուրաքանչյուր ենթաբաղադրիչի շրջանակներում գործողությունների ընտրությունը՝ ապահովելով, որ առաջարկվող միջամտությունները համահունչ լինեն համայնքների կարիքներին և առաջնահերթություններին և ապահովեն մասնավոր հատվածի կողմից առկա և պլանավորված միջամտությունների հետ փոխլրացումը/ կոմպլեմենտարությունը:

Հանդիպումների ընթացքում ԶԿ թիմը մասնակիցներին ներկայացրել է յուրաքանչյուր մարզում երկու կլաստեր ստեղծելու իրենց ծրագրերը, ինչպես օրինակ՝ Դիլիջանը Տավուշի մարզում,

[8] Այս հատվածը կլրամշակվի համաձայն ԶԿ-ից հետագայում ստացված տեղեկությունների

Աշտարակն ու Ապարանն Արագածոտնի մարզում: Նման ձևով երկուական կլաստեր է առաջարկվել մյուս մարզերից յուրաքանչյուրի համար: Խորհրդակցությունների ընթացքում պոտենցիալ շահագրգիռ կողմերը մարզերում, որտեղ անցկացվել են խորհրդակցություններ, իրենց երախտագիտություն են հայտնել նոր ծրագրի համար և արժեքավոր առաջարկներ են ներկայացրել առաջարկվող կլաստերների շրջանակներում ենթածրագրերի համար՝ առաջարկվող գործողությունները համահունչ դարձնելով համայնքների կարիքներին և առաջնահերթություններին:

Յոթ կլաստերների ընտրությունը կատարվել է մի քանի չափանիշների հիման վրա, որոնք մշակվել են ՀԲ թիմի հետ համատեղ: Չափորոշիչների ցանկը ներառում էր.

ա. Կառավարության զբոսաշրջության և տարածաշրջանային զարգացման առաջնահերթությունները,

բ. Հայաստան մուտք գործելու հասանելիությունը հիմնական անցակետերից (երկրային և օդային),

գ. Գործող զբոսաշրջային ՈՒԿԳ-ի առկայությունն՝ առաջարկվող կլաստերի կայունությունը խթանելու համար,

դ. Մասնավոր հատվածի ներգրավման հնարավորությունները,

ե. Վերջերս ավարտված և ընթացիկ զբոսաշրջային ներդրումների գեներացում՝ ներդաշնակությունը մեծացնելու նպատակով, ներառյալ ՏՏԵԶԾ-ի շրջանակներում ներդրումները,

զ. Տնտեսական կենսունակությունը և ներդրումների վերադարձը,

է. Հզոր ներուժի առկայությունը զբոսաշրջային առաջարկների զարգացման համար՝ մեծացնելով Հայաստանի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր առաջարկների բազմազանեցումը (դիվերսիֆիկացիան):

Սույն ՇՆՊ-ն հիմնվում է ՏՏԵԶ ծրագրի շրջանակներում ԷՆ-ի, ԶԿ-ի, ՀՏԶՀ-ի, Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից նախկինում ձեռնարկած ներգրավման գործունեության վրա: Նման ներգրավման գործունեությունը ներառում է.

• Շահակիրների բացահայտումը և դասակարգումը;

• Շահակիրների քարտեզագրման և վերլուծության իրականացումը;

• Հստակ և ժամանակին տեղեկատվության տրամադրումը՝ միաժամանակ բարելավելով հաղորդակցման հոսքը,

• Ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ թափանցիկության ապահովումը և իրազեկումը, թե ինչպես կարող են այլ կողմերն օգտակար լինել,

• Շահակիրներին ունկընդրելը և նրանց կարիքների ու շահերի ըմբռնումը,

• Ներգրավման հնարավորությունների առաջարկը, որը ժամանակի և ռեսուրսների արդյունավետ օգտագործում է՝ բովանդակալից ներդրում կատարելու հնարավորություն տալով շահակիրներին:

1.2. Շահակիրների ներգրավման պլանի նպատակն ու ծավալը

ՋՄԵԲԾ-ն պատրաստվում է Համաշխարհային բանկի Բնապահպանական և սոցիալական շրջանակին (ԲՍՇ) համապատասխան: Համաձայն Շահակիրների ներգրավման և տեղեկատվության բացահայտման Բնապահպանական և սոցիալական ստանդարտ 10-ի (ԲՍՍ), իրականացնող մարմինները պետք է շահակիրներին տրամադրեն ժամանակին, տեղին, հասկանալի և մատչելի տեղեկատվություն և խորհրդակցեն նրանց հետ մշակութային առումով ընդունելի ձևով, որը զերծ է մանիպուլյացիայից, միջամտությունից, հարկադրանքից, խտրականությունից կամ ահաբեկումից և անվճար է:

Սույն ՇՆՊ-ի **ընդհանուր նպատակն** է սահմանել շահակիրների ներգրավման ծրագիր, ներառյալ հանրային տեղեկատվության հրապարակումը և խորհրդատվությունը Ծրագրի ողջ ընթացքում: ՇՆՊ-ն նախանշում է այն ուղիները, որոնցով ծրագիրն իրականացնող գործակալությունը շփվելու է շահակիրների հետ և ներառում է մեխանիզմ, որով մարդիկ կարող են բարձրաձայնել մտահոգությունները, արձագանքել կամ բողոքներ ներկայացնել ծրագրի գործողությունների կամ ծրագրի հետ կապված որևէ գործունեության վերաբերյալ:

ՇՆՊ-ն ընդգրկում է Ծրագրի ընդհանուր գործողությունները՝ առաջնահերթություն տալով պոտենցիալ բնապահպանական և սոցիալական ռիսկեր ունեցողներին:

Ենթածրագրի և/կամ տեղանքին հատուկ մակարդակի ներգրավումը կինտեգրվի Ծրագրում որպես համապատասխան գործողությունների ընդհանուր նախագծման և իրականացման մաս: Կախված ենթածրագրի գործունեության տիպաբանությունից՝ ներգրավման ակնկալվող մակարդակը, ինչպես նաև մոտեցումներն ու եղանակները կարող են սահմանվել որպես i) ռազմավարական ներգրավում, իրազեկման բարձրացում և հանրային խորհրդատվություններ՝ աջակցելու կլաստերների զարգացման պլաններին և ներուժի զարգացում տեխնիկական աջակցության գործունեությամբ և ii) տեղական մակարդակի ներգրավում ենթակառուցվածքային ներդրումների բաղադրիչի ներքո, ինչպես վերականգնման, այնպես էլ նոր շինարարության համար:

Հիմնական ոլորտները, որտեղ շահակիրների ներգրավումն ու իրազեկումը կլինի առաջնահերթություն, հետևյալն են

ա. Տեղական զբոսաշրջության ինտեգրված, կայուն և ներառական զարգացման խթանում՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ.

• Կլաստերների զարգացման ծրագրերի (ՔԶԾ) մշակում,

• Զբոսաշրջության տեսլականը ուրվագծող կլաստերային հայեցակարգերի մասնակցային պատրաստում,

• Թիրախային կլաստերների բրենդինգի և առաջխաղացման խթանում/բարելավում,

• Տեխնիկական գնահատումներ և նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումներ

• Հանրային-մասնավոր ներգրավում;

բ. Ծրագրի գործունեության հետ կապված հնարավոր բացասական ազդեցությունների կառավարում: Նման ազդեցությունները կարող են առաջանալ հետևյալ դեպքերում.

• Հողի օտարում և տարաբնակեցում; տնտեսական տարհանում և ազդեցություն բիզնեսի վրա,

• Համայնքի առողջություն և անվտանգություն;

• Ջրի, բնական ռեսուրսների, էկոհամակարգային ծառայությունների հասանելիության կրճատում,

• Քաղաքաշինություն;

• Երթևեկության և զբոսաշրջության հոսքերի ավելացում, երթևեկության նոր ձևեր,

• Ազդեցություններ մշակութային ժառանգության վրա,

• Բնապահպանական, սոցիալական և մշակութային ժառանգության այլ ազդեցություններ:

գ. Զարգացման պոտենցիալ հնարավորությունների և սոցիալական ընդունելիության բարձրացում: Ծրագիրը կարող է սահմանել լրացուցիչ միջոցներ՝ խթանելու մասնակցությունը և բարձրացնելու Ծրագրի օգուտների հասանելիությունը՝ ստեղծելով հնարավորություններ կանանց և խոցելի ու մարգինալացված խմբերի համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով, աղքատ տնային տնտեսությունները, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խմբերը:

Վերոնշյալ նպատակները կարող են ուսումնասիրվել շահակիրների բովանդակալից ներգրավման միջոցով, որը երկկողմանի հաղորդակցում է՝ կենտրոնանալով ***խորհրդատվության, համագործակցության և շահակիրների հզորացման վրա:*** Այն ներառում է.

• **Իրազեկում** - տեղեկատվություն տեղեկագրերի, բրոշյուրների, կայքերի, սոցիալական ցանցերի, մամուլի հաղորդագրությունների, մամուլի ասուլիսի միջոցով;

• **Խորհրդատվություն** - տեղեկացված որոշումների համար տեղեկությունների և հետադարձ արձագանքի ստացում՝ հարցումների, ֆոկուս խմբերի, սոցիալական լրատվամիջոցների, առցանց քննարկումների, հանրային հանդիպումների, ֆորումների, աշխատաժողովների, անհատական զրույցների միջոցով;

• **Համագործակցություն** – աշխատանք շահակիրների հետ՝ հասկանալու նրանց խնդիրները և մտահոգությունները պատասխանները համատեղ ձևակերպելու նպատակով՝ օգտագործելով ֆորումները, խորհրդատվական հարթակները, կլոր սեղանի քննարկումները, գործընկերությունը;

• **Լիազորում** – որոշ հարցերի վերաբերյալ որոշումների կայացման պատվիրակում շահակիրներին՝ շահակիրների կառավարման կառուցվածքում որպես կոմիտեի անդամներ ինտեգրելու միջոցով (օրինակ՝ Բողոքների լուծման հանձնաժողովում, համայնքների զարգացման կոմիտեում):

Համայնքային մակարդակում շահակիրների ներգրավումը կարող է դիտվել նաև որպես համայնքի ներգրավման շարունակականություն:

Ստորև ներկայացված նկար 1-ը, որն ադապտացված է Հանրային մասնակցության միջազգային

ՀԱՍՏԱՅՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ				
Իրազեկում ***Համայնքի որոշ մասի ներգրավում*** Համայնքին տեղեկությունների տրամադրում	**Խորհրդատվություն** ***Համայնքի ավելի մեծ հատվածի ներգրավում*** Հաղորդակցությունն ուղղված է դեպի համայնք՝ հետադարձ արձագանքի ակնկալիքով	**Ներգրավում** ***Համայնքի ավելի լայն ներգրավում*** Երկկողմանի հաղորդակցություն, մասնակցային հաղորդակցություն	**Համագործակցում** ***Համայնքի ներգրավում*** Համագործակցություն համայնքի հետ Ծրագրի յուրաքանչյուր ասպեկտում՝ մշակումից մինչև լուծում	**Համատեղ պատասխանատվություն** ***Մեփականության և պատասխանատվության ձևավորում*** Սեփականության զգացմունքի ձևավորում

ասոցիացիայի կողմից կազմված դիագրամից, ցույց է տալիս նման շարունակականության մակարդակները:

Ելնելով վերը ներկայացված մոդելից՝ Ծրագիրը պետք է կիրառի շահակիրների ներգրավման համապատասխան մոտեցում, որը համահունչ է յուրաքանչյուր խմբի կարիքներին և բնութագրերին: Խոցելի բնակչության համար, ինչպիսիք են կանայք, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք, տեղահանված անձինք և աշխատանքային միգրանտները, պետք է կիրառվի ներգրավման ավելի ընդգրկուն և մասնակցային մոդել՝ ապահովելով նրանց ձայնը, լսելիությունը և նրանց կարիքների բավարարումը: Կառավարական կառույցների, տեղական իշխանությունների և ինստիտուցիոնալ շահագրգիռ կողմերի համար առավել արդյունավետ կլինի համագործակցային մոտեցումը, որը կենտրոնացած է գործընկերության և համակարգման վրա: Ներգրավման այս տարբերակված ռազմավարությունը կօգնի ապահովել, որ բոլոր խմբերը բովանդակալից ներգրավված լինեն Ծրագրում, և նրանց ներդրումները ձևավորեն Ծրագրի արդյունքները:

Նկար 1 – Հանրության ներգրավման շրջանակի նախնական մոտեցումներ

1.3. Սկզբունքները

Լավ գործելակերպի մոտեցումներին համապատասխանեցնելու համար Ծրագիրը շահագրգիռ կողմերի ներգրավման համար կկիրառի հետևյալ սկզբունքները.

• **Թափանցիկություն ու շրջափուլային մոտեցում.** Ծրագրի/ենթածրագրերի հանրային խորհրդատվությունները կկազմակերպվեն Ծրագրի ողջ շրջափուլի ընթացքում՝ բաց/թափանցիկ եղանակով, առանց արտաքին մանիպուլյացիայի, միջամտության, հարկադրանքի կամ ահաբեկման:

• **Տեղեկացված մասնակցություն ու հետադարձ արձագանք.** տեղեկատվությունը համապատասխան ձևաչափով կտրամադրվի և լայնորեն կտարածվի բոլոր շահագրգիռ կողմերի միջև. հնարավորություններ են ընձեռնվում շահագրգիռ կողմերին՝ կարծիք հայտնելու, ինչպես նաև մեկնաբանություններն ու մտահոգությունները վերլուծելու և լուծելու համար:

• **Ներառականություն ու զգայունություն.** շահակիրների նույնականացումն իրականացվում է հաղորդակցությունն ուժեղացնելու և արդյունավետ հարաբերությունները խթանելու համար: Ծրագրին մասնակցության գործընթացը ներառական է՝ յուրաքանչյուր փուլում խրախուսելով բոլոր շահագրգիռ կողմերին ներգրավվել խորհրդատվություններում: Տեղեկատվության հավասար հասանելիությունն ապահովված է բոլոր շահագրգիռ կողմերի համար, նրանց կարիքների նկատմամբ զգայունությունը կանխորոշում է ներգրավման մեթոդների ընտրությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում խոցելի խմբերին, որոնց դեպքում առկա է Ծրագրի օգուտներից դուրս մնալու վտանգը, այսպիսի խմբերն են՝ աղքատության շեմին ապրող ընտանիքները, կանայք, տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք, տեղահանված անձինք, աշխատանքային միգրանտները, ինչպես նաև հաշվի է առնվում էթնիկ խմբերի մշակութային զգայունությունը:

• **Ճկունություն.** մշակութային համատեքստը (օրինակ՝ որոշակի գենդերային դինամիկան) կամ կառավարման գործոնները (օրինակ՝ վրեժխնդրության բարձր ռիսկը) խաթարում է դեմ առ դեմ ներգրավման ավանդական ձևերը, մեթոդաբանությունը պետք է հարմարվի ներգրավման այլ ձևերին, ներառյալ համացանցով կամ հեռախոսային հաղորդակցման տարբեր ձևերը:



Նկար 2 – Շահակիրների ներգրավման շրջափուլ

Նկար 2-ում ներկայացված է շահակիրների ներգրավման շրջափուլն իր տարրերով.

- Շահակիրների ներգրավում և փոխգործակցություն, համագործակցության համար երկխոսության նախաձեռնում,
- Համագործակցության նշաձողերի բացահայտում շահակիրների շահերի և կարիքների վերանայման միջոցով, համագործակցության ընդլայնում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ընդհանուր հատվածներ գտնելու միջոցով,
- Համագործակցություն և մասնակցություն Ծրագրի գործողություններին՝ իրենց շահերի հետապնդման, իրենց կարիքների բավարարման, որոշումների կայացման գործընթացների վրա ազդելու հնարավորության համար,
- Մասնակցային գործընթացներում ներգրավումը թույլ կտա նրանց արտահայտել իրենց կարծիքը, կիսել պատասխանատվությունն արդյունքների համար և տեր կանգնել արդյունքներին:

Շահակիրների ներգրավումը շարունակական շրջափուլ է, որը նորովի է սկսվում իր վերջնական կետին հասնելուց հետո: Այս գործընթացը ներառում է ձեռքբերումների գրանցում, հետադարձ կապի հավաքում, կատարողականի բարելավում, նպատակների թարմացում և շրջափուլի կրկնում ավելի բարձր մակարդակով: Այս մոտեցումը ներառում է նոր շահակիրների բացահայտում և ներգրավում՝ միաժամանակ պահպանելով համագործակցությունը հին գործընկերների հետ:

ՇՆՊ-ն պետք է թարմացվի իրականացված ներգրավման աշխատանքներով՝ ԿՋԾ-ների մշակման ընթացքում և/կամ ներդրումների տարածքների հստակեցման ընթացքում: Այն կլաստերներում, որտեղ ներդրումների տարածքները հստակեցված չեն, ՇՆՊ-ները կթարմացվեն աշխատանքների իրականացման ընթացքում:

1.4. Սահմանափակումներ

Շահակիրներն անհատներ կամ խմբեր են, որոնք շահագրգռված են կամ ազդեցություն ունեն նախագծերի վրա: ՇՆՊ-ի նպատակն է ներգրավել բոլոր շահագրգիռ կողմերին կամ առնվազն նրանց համապատասխան խմբերին և հաշվի առնել նրանց կարիքներն ու շահերը Ծրագրում: Այնուամենայնիվ, շահագրգիռ կողմերի ակնկալիքները և հարաբերությունները կառավարելը կարող է դժվար լինել, հատկապես, երբ նրանք ունեն հակասական կամ մրցակցող շահեր, կարծիքներ կամ պահանջներ:

Նախապատրաստական փուլում հայտնաբերված շահագրգիռ կողմերի ներգրավման սահմանափակումները կարող են ներառել հետևյալը.

ա. ԿՋԾ-ների մշակում.

· **Ազդեցության ենթակա շահակիրների բացառում.** ազդեցության ենթակա շահագրգիռ կողմերը կարող են դուրս մնալ ներառական գործընթացից՝ համայնքից նրանց բացակայության կամ նրանց պատշաճ կերպով չներգրավելու պատճառով:

· **Մասնակցության դժկամություն.** որոշ շահակիրներ կարող են չցանկանալ ներգրավվել տարածաշրջանային և զբոսաշրջային կլաստերների զարգացման հայեցակարգերի և ներդրումային ծրագրերի նախապատրաստմանը, ինչը հաճախ բխում է Ծրագրի նպատակների և գործընթացների չհասկացվածությունից:

- **Սահմանափակ հմտություններ ու փորձ.** Որոշ շահակիրներ կարող են չունենալ անհրաժեշտ հմտություններ և փորձ այս գործողություններին արդյունավետորեն մասնակցելու համար:

բ. Տարածքային ներդրումներ.

· **Համակարգված մոտեցման բացակայություն**. Շահակիրների ներգրավման հարցում կարող է լինել ոչ համակարգված մոտեցում, որը խոչընդոտում է շահակիրների նույնականացմանը և կառուցողական հարաբերությունների զարգացմանն ու պահպանմանը, հատկապես Ծրագրի ազդեցությանը ենթակա կողմերի հետ:

· **Շահակիրների շահերի ոչ համարժեք գնահատում.** Ծրագրին շահակիրների հետաքրքրության և աջակցության մակարդակը չգնահատելը կարող է խանգարել նրանց տեսակետների ընդգրկմանը Ծրագրի/ենթածրագրի նախագծում և բնապահպանական և սոցիալական փաստաթղթերում:

· **Անգործություն կամ անտարբերություն**. Ծրագրի շրջափուլի ընթացքում հնարավոր է նկատվի կարողությունների պակաս կամ անտարբերություն՝ Ծրագրի ազդեցությանը ենթակա կողմերի արդյունավետ և ներառական ներգրավումը խթանելու և դյուրացնելու հարցում: Սա ներառում է Ծրագրի գործողությունների վերաբերյալ ժամանակին, հասկանալի, մատչելի և համապատասխան ձևաչափով տեղեկատվություն չտրամադրելը, ներառյալ բնապահպանական և սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները:

Շահակիրների ներգրավման վերոնշյալ սահմանափակումները լուծելու համար Ծրագիրը կհետևի շահագրգիռ կողմերի, հատկապես խոցելի և մարգինալացված խմբերի հետ հարաբերություններ ստեղծելու և կառուցելու հստակ գործընթացին, ինչպես նկարագրված է սույն ՇՆՊ-ում:

Համայնքների ղեկավարների կողմից կստեղծվեն ՏԱԽ-եր՝ էկոնոմիկայի նախարարության կողմից Նախարարի որոշմամբ՝ նախքան ծրագրի մեկնարկը: ՏԱԽ-ի կազմը, դերերը, պարտականությունները և ընդհանուր գործառույթները կհստակեցվեն ԾԿՁ-ում:

Տեղական աշխատանքային խմբերը (ՏԱԽ) կներառեն տեղական ներկայացուցիչներ, այդ թվում՝ համայնքների ղեկավարներ, քաղաքապետարանի ներկայացուցիչներ, տեղական ՀԿ-ների, առաջադրված ակտիվ բնակիչների և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: ՏԱԽ-ը ներգրավված կլինի Բաղադրիչ 1-ի ներքո ԿՁԾ-երի պատրաստման ողջ ընթացքում՝ որպես խորհրդատվական խումբ խորհուրդ տալու և ուղղորդելու ԿՁԾ-երի մշակման, միջամտությունների առաջնահերթության որոշման վերաբերյալ, ինչպես նաև մշակված վերջնական ԿՁԾ-երի հանդեպ տեղական մակարդակում սեփականության զգացմունքի բարձրացման նպատակով: ՏԱԽ-ը նաև կծառայի որպես առանցքային օղակ տեղական համայնքների համար՝ տրամադրելու հետադարձ կապ կամ մտահոգություններ՝ կապված Բաղադրիչ 2-ի շրջանակներում շինարարական աշխատանքների նախապատրաստման, տեխնիկական նախագծման և իրականացման, ինչպես նաև աշխատանքի որակի հետ կապված հարցերի հետ՝ համագործակցելով ՀՏՁՀ-ի, կապալառուների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Բացի այդ, ՏԱԽ-ը պատասխանատու կլինի կլաստերներում իրականացվող գործողությունների առաջընթացի վերաբերյալ համայնքին կանոնավոր կերպով իրազեկելու և տեղական մակարդակում բողոքները կառավարելու համար:

Շահառուների շահերը կանոնավոր կերպով կգնահատվեն ֆոկուս խմբերի, խորհրդատվությունների և այլ մեթոդների միջոցով՝ ապահովելով, որ առաջարկվող ՇՆ գործողությունները նպատակաուղղված են և համարժեք շահակիրների կարիքներին և հեռանկարներին: Թե՛ Ծրագրի անձնակազմի, և թե՛ շահակիրների համար կկազմակերպվի վերապատրաստում և աշխատաժողով՝ անհրաժեշտության դեպքում արդյունավետ ներգրավման համար: Բնապահպանական և սոցիալական ռիսկերի վերաբերյալ ծրագրի տեղեկատվությունը պատշաճ կերպով կհրապարակվի ժամանակին և մատչելի ձևով, օգտագործելով տարբեր ձևաչափեր, որը հասնելի կլինի տարբեր լսարանների համար: Բողոքների լուծման ձևավորված մեխանիզմը կհեշտացնի երկկողմանի հաղորդակցումը, մինչդեռ տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցությունը կօգնի կամրջել փոխըմբռնման և վստահության բացերը: Ներգրավման ռազմավարությունները պարբերաբար կգնահատվեն՝ շարունակական բարելավման և շահագրգիռ կողմերի կարիքներին արձագանքելու համար: Աղյուսակ 1-ում ներկայացված են առաջարկվող միջոցները՝ լուծելու ՇՆ սահմանափակումները և մարտահրավերները:

Աղյուսակ 1. Առաջարկվող միջոցառումներ ուղղված ՇՆ սահմանափակումների լուծմանը

ՇՆ սահմանափակումներ ու մարտահրավերներ	Սահմանափակումների պատճառները	Սահմանափակումները լուծելու միջոցները	Պատասխանատու կողմեր
ԿՁԾ-երի մշակում			
Ազդակիր շահակիրների բացառում	Բացակայություն համայնքից կամ թերացում պատշաճ ներգրավման հարցում	▪ Ծրագրի մեկնարկի հանդիպումներ կանցկացվեն բոլոր թիրախային մարզերում՝ Ծրագրի և դրա բաղադրիչների մասին համայնքներին տեղեկացնելու և համագործակցություն սկսելու նպատակով,	ԶԿ, ՀՏՁՀ, մարզպետարաններ, համայնքներ, ՏԱԽ-եր

		▪ Կարող են հաջորդել կլոր սեղանի քննարկումները՝ հիմնական շահագրգիռ կողմերին երկխոսության մեջ ներգրավելու և նրանց կարծիքը ստանալու համար. ▪ ԿԶԾ-երի պատրաստման մասին տեղեկատվությունը կտեղադրվի ազդակիր համայնքների սոցիալական ցանցերի էջերում՝ հնարավորություն տալով ներգրավվել համայնքի անդամների և ՀԿ-ների ավելի լայն շրջանակի: Սա կխրախուսի շահագրգիռ կողմերին մասնակցել ԿԶԾ պատրաստման գործընթացին ցանկացած փուլում, ներառյալ ԿԶԾ նախագծի հանրայնացման ժամանակաշրջանը:	
Մասնակցության դժկամություն	▪ Տարածաշրջանային և զբոսաշրջային կլաստերի զարգացման հայեցակարգերի և ներդրումային ծրագրերի նախապատրաստման մեջ ներգրավվելու ցանկության բացակայություն, ▪ Ծրագրի նպատակների և գործընթացների ընկալման բացակայություն	▪ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական բրոշյուրներ կամ թռուցիկներ կպատրաստվեն և կտարածվեն թիրախային համայնքներում; ▪ Յուրաքանչյուր կլաստերի համար կվարձվի տեղական կապի համակարգող աջակցելու ՀՏԶՀ-ին՝ ապահովելու խոցելի խմբերի պատշաճ մասնակցությունը հանրային խորհրդատվություններին և այլ խմբային հանդիպումներին:	ՀՏԶՀ, տեղական կապի համակարգողներ, ՏԱԽ-եր
Սահմանափակ հմտություններ ու փորձառություն	Անհրաժեշտ հմտությունների և փորձառության բացակայություն՝ ԿԶԾ-երի պատրաստման աշխատանքներում արդյունավետ ընդգրկվելու համար	▪ Անհրաժեշտության դեպքում կանցկացվեն ֆոկուս-խմբային քննարկումներ կանանց, երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց թիրախային խմբերով, ▪ Սոցիալական մեդիա հարթակներում կծավալվեն քննարկումներ՝ կարծիքներ հավաքելու նպատակով,	ՀՏԶՀ, տեղական կապի համակարգողներ, ՏԻՄ-եր, ՏԱԽ-եր

		▪ Կկազմակերպվեն ներուժի զարգացման աշխատաժողովներ և վերապատրաստումներ ապահովելով համայնքի անդամների բովանդակալից մասնակցությունը՝ նրանց գիտելիքներն ու հմտություններն ընդլայնելու նպատակով:	
Տարածքային ներդրումներ			
Համակարգված մոտեցման բացակայություն	Կարող է խոչընդոտել շահակիրների նույնականացմանը և կառուցողական հարաբերությունների զարգացմանն ու պահպանմանը, մասնավորապես՝ Ծրագրի ազդեցությանը ենթակա կողմերի հետ	ՇՆ համակարգված մոտեցում կկիրառվի բոլոր թիրախային մարզերում՝ շահագրգիռ կողմերին բացահայտելու և նրանց հետ կառուցողական հարաբերություններ զարգացնելու համար, ներառյալ. ▪ Ծրագրի մեկնարկի հանդիպումներ բոլոր թիրախային մարզերում, ▪ Կլոր սեղանի քննարկումներ, ▪ Ծրագրի մասին հասանելի տեղեկատվություն թիրախային համայնքների սոցիալական մեդիայի էջերում, ▪ Ծրագրի հիմնական տեղեկություններով բրոշյուրների կամ թերթիկների պատրաստում և տարածում թիրախային համայնքներում, ▪ Յուրաքանչյուր կլաստերի համար տեղական կապի համակարգողի վարձում՝ շահակիրների հետ հարաբերություններում ՀՏԶՀ-ին աջակցելու համար,	ՀՏԶՀ, տեղական կապի համակարգողներ, ՏԻՄ-եր, խորհրդատուներ, կապալառուներ, ՏԱԽ-եր
Շահակիրների հետաքրքրության ոչ պատշաճ գնահատում	Ծրագրի շահակիրների հետաքրքրության և աջակցության մակարդակի գնահատման թերացումը կարող է խանգարել նրանց տեսակետների դիտարկմանը ծրագրի նախագծման և բնապահպանական և սոցիալական	▪Շահակիրների հետաքրքրության մակարդակը պարբերաբար կգնահատվի հետևյալ միջոցներով՝ ▪ Հանրային քննարկումներ, ▪ Ֆոկուս-խմբային քննարկումներ, ▪ Սոցիալական մեդիայի հարթակներում քննարկումների նախաձեռնում	ՀՏԶՀ, տեղական կապի համակարգողներ, ՏԻՄ-եր, խորհրդատուներ, կապալառուներ, ՏԱԽ-եր

	փաստաթղթերի պատրաստման փուլում	կարծիքներ հավաքելու նպատակով, ▪ ՇՆՊ գործողությունների համապատասխանությունը պարբերաբար կգնահատվի և կթարմացվի:	
Անկարողություն կամ անտարբերություն	Ծրագրի ամբողջ շրջափուլի ընթացքում կարող է դրսևորվել անկարողություն կամ անտարբերություն Ծրագրի ազդեցությանը ենթակա կողմերի արդյունավետ և ներառական ներգրավումը խթանելու և դյուրացնելու գործում	Ծրագրի գործողությունների մասին տեղեկատվությունը, ներառյալ բնապահպանական և սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները, շահակիրներին կտրամադրվեն ժամանակին, հասկանալի, մատչելի և համապատասխան ձևով հետևյալ միջոցներով՝ ▪ ԲՍԿՇ-ի, ՏՇ-ի, ՇՆՊ-ի հանրայնացում, ▪ Ծրագրի հիմնական տեղեկություններով բրոշյուրների կամ թերթիկների պատրաստում և տարածում, ▪ Որակական հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, բովանդակալից խորհրդատվություններ, ▪ ԲՍԿՊ-ների, ՏՊ-ների, եթե այդպիսիք կան, ԱԿԸ հանրայնացում մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը, ▪ Համայնքների ծանուցում շինարարական աշխատանքների մեկնարկի մասին:	ՀՏՋՀ, տեղական կապի համակարգողներ, ՏԻՄ-եր, խորհրդատուներ, կապալառուներ, ՏԱԽ-եր
Փոխադրամիջոցների հասանելիության բացակայություն	Բնակություն հեռավոր վայրերում, տարիք և հաշմանդամություն	▪ Ապահովել ծրագրի հիմնական հաղորդագրությունների տարածումը բազմաթիվ ուղիներով, ներառյալ սոցիալական լրատվամիջոցները, համացանցը, պաստառները, տեղեկատվական թերթիկները, բանավոր հաղորդակցումը, ▪ Տեղական կապի համակարգողի կողմից հեռախոսային կամ անձնական կապի	ՀՏՋՀ, տեղական կապի համակարգողներ, ՏԻՄ-եր, ՏԱԽ-եր, խորհրդատուներ, կապալառուներ

		հաստատում հեռավոր համայնքների շահակիրների հետ:	

2.ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1. Հիմնական սահմանումներ եւ շահակիրների խմբեր

Ծրագրի շահակիրները սահմանվում են որպես անհատներ, պաշտոնական և ոչ պաշտոնական խմբեր և կազմակերպություններ և/կամ կառավարության գերատեսչություններ, որոնց շահերի կամ իրավունքների վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն կազդի Ծրագիրը, ինչպես դրական, այնպես էլ բացասական, որոնք կարող են շահագրգռված լինել Ծրագրի իրականացմամբ, և ովքեր ունեն Ծրագրի արդյունքների վրա որևէ կերպ ազդելու ներուժ:

Համաձայն ՀԲ Բնապահպանական և սոցիալական շրջանակի Բնապահպանական և սոցիալական ստանդարտ 10-ի (ԲՍՍ10)՝ Շահակիրների ներգրավում և տեղեկատվության հանրայնացում, շահակիրները դասակարգվում են.

- **Ազդակիր կողմերի** – շահակիրներ, ովքեր ազդեցության են ենթարկվում կամ կարող են ենթարկվել Ծրագրի կողմից,
- **Այլ հետաքրքրված կողմերի** – այլ կողմեր, ովքեր հետաքրքրված են Ծրագրով:

Որպես շահակիրների հատուկ կատեգորիա, ՇՆՊ-ն նույնականացնում է **անապահով կամ խոցելի խմբերին**՝ անհատներին կամ խմբերին, ովքեր կարող են Ծրագրի բացասական ազդեցությանը ենթարկվել և/կամ պահանջում են ներգրավման հատուկ ջանքեր իրենց խոցելի կարգավիճակի պատճառով՝ ապահովելու նրանց հավասար ներկայացվածությունը Ծրագրի վերաբեյալ խորհրդատվության և որոշումների կայացման գործընթացում: Ջանքեր կգործադրվեն բացահայտելու խոցելի, անապահով կամ մարգինալացված խմբերին և պարզելու նրանց առանձնահատուկ կարիքները:

Հիմնվելով նման դասակարգման վրա՝ ՇՆՊ-ն ուրվագծում է ներգրավման համապատասխան մեխանիզմները, դրանց մոտավոր ժամանակացույցը, դերերն ու իրականացման պատասխանատվությունը և ՇՆՊ միջոցառումների իրականացման համար հատկացված միջոցները: Շահակիրների ներգրավման մեխանիզմները կնախագծվեն համաձայն ՇՆՊ-ում նույնականացված խոցելի խմբերի կարիքների:



Այլ 3 – Գործընկերներ, սպասելիք ազդակիր և այլ հետաքրքրված կողմեր

2.2. Պոտենցիալ ազդակիր կողմեր

Ազդակիր կողմերը ներառում են տեղական համայնքները, համայնքի անդամներին և այլ կողմեր որոնք կարող են ենթարկվել Ծրագրի անմիջական ազդեցությանը:

ԿԶԾ-երի նախապատրաստումը կընդգրկի բոլոր մակարդակների շահակիրների ավելի լայն շրջանակ՝ ապահովելով հիմնական գործընթացների մասնակցային բնույթը և առաջնորդվելով լավ կառավարման սկզբունքներով, ներառյալ թափանցիկությունը, բացահայտումը և շահակիրների ներգրավումն ու մասնակցությունը: ՏԱԽ-ը ներգրավված կլինի Բաղադրիչ 1-ի ներքո ԿԶԾ-երի պատրաստման ողջ ընթացքում՝ որպես խորհրդատվական խումբ խորհուրդ տալու և ուղղորդելու ԿԶԾ-երի մշակման, միջամտությունների առաջնահերթության որոշման վերաբերյալ, ինչպես նաև մշակված վերջնական ԿԶԾ-երի հանդեպ տեղական մակարդակում սեփականության զգացմունքի բարձրացման նպատակով:

Տարածքային ներդրումները, ինչպիսիք են շինարարական աշխատանքները, պետք է իրականացվեն հյուրընկալող համայնքների մասնակցությամբ, և ազդեցությունների ու մեղմացման միջոցառումների ըմբռնումով, պետք է հետաքրքրվել Ծրագրի ազդակիր մարդկանց, ներառյալ խոցելի և մարգինալացված խմբերի տեսակետներով: ՏԱԽ-ը նաև կծառայի որպես առանցքային օղակ տեղական համայնքների համար՝ տրամադրելու հետադարձ կապ կամ մտահոգություններ՝ կապված Բաղադրիչ 2-ի շրջանակներում շինարարական աշխատանքների նախապատրաստման, տեխնիկական նախագծման և իրականացման, ինչպես նաև աշխատանքի որակի հետ կապված հարցերի հետ՝ համագործակցելով ՀՏՋՀ-ի, կապալառուների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Ծրագիրը դրական ազդեցություն կունենա շահակիրների վրա՝ ներուժի զարգացման նախաձեռնությունների միջոցով, որոնք ուսուցման և կարիերայի զարգացման հնարավորություններ են ընձեռում տարածաշրջանի զբոսաշրջային ընկերությունների և տեղական փոքր բիզնեսի հիմնական անձնակազմի համար: Բացի այդ, ինստիտուցիոնալ բարեփոխումները կհզորացնեն ԷՆ-ը, ԶԿ-ն, ՀՏՋՀ-ն և մարզային ու տեղական ինքնակառավարման մարմինները: Ազդեցության ենթակա համայնքները, ներառյալ խոցելի խմբերը, նույնպես կունենան աշխատատեղերի և ծառայությունների հասանելիության, ենթակառուցվածքների բարելավում, ինչպես օրինակ հանրային վայրերի և զբոսաշրջային տարածքների մուտքի բարելավումը, որը կնպաստի կյանքի որակի բարձրացմանը: Մյուս կողմից, Ծրագրի գործողությունները կարող են բացասաբար ազդել տեղական փոքր բիզնեսի կամ տնային տնտեսությունների վրա՝ շինարարության ընթացքում տարաբնակեցման կամ ԲԿՍ ազդեցությունների հետևանքով: Նման բոլոր ազդեցությունները կմեղմացվեն համաձայն ՏՇ-ի և ԲՍԿՇ-ի:

Ընդլայնված շրջանակով, ազդակիր կողմերը կարող են ներառել հետևյալը.

Աղյուսակ 2. ՋՄԵԲԾ-ի հիմնական ազդակիր կողմերը

Պոտենցիալ ազդակիր կողմերը և շահառուները		
ՏԻՄ-եր	Ուղղակիորեն կզբաղվեն ազդակիր բնակչության հետ՝ բնակիչներին հաղորդելով	Հանդիպումներ, հանրային

Արտաշատ համայնքի Հնաբերդ բնակավայր (Դվինի կլաստեր Արարատի մարզում), Արենի համայնքի Արենի բնակավայր (Արենիի կլաստեր Վայոց Ձորի մարզում), Դիլջան քաղաքը (Դիլիջանի կլաստեր Տավուշի մարզում), Եղեգիս համայնքը (Եղեգիս կլաստեր Վայոց Ձորի մարզում), Գյումրի քաղաքը (Գյումրիի կլաստեր Շիրակի մարզում), Գորիս քաղաքը (Գորիսի կլաստեր Սյունիքի մարզում) և Ջերմուկ համայնքը (Ջերմուկի կլաստեր, Վայոց Ձորի մարզ)	Ծրագրի նպատակը, կազմակերպելով հանրային լսումներ և տեղեկատվության հանրայնացում, հավաքելով բնակիչների մտահոգությունները և առաջարկությունները, ինչպես նաև պարզաբանելով սխալ հաղորդակցությունը: Ազդեցության ենթակա բնակավայրերը, ինչպես նաև խոշոր համայնքները շահագրգռված են ենթակառուցվածքների զարգացմամբ: Ծրագիրը կնպաստի ազդակիր բնակավայրերի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացմանը, որոնք ընդհանուր առմամբ կշահեն, մասնավորապես կշահեն նաև տեղական ՓՄՁ-ները հատկապես հիմնական ենթակառուցվածքների և ծառայությունների վերականգնումից հետո, որոնք կբարելավեն զբոսաշրջության վայրերի հասանելիությունը (մուտքի ճանապարհներ, կայանատեղիներ, փողոցների լուսավորություն և այլն), փողոցների լուսավորությունն ու անվտանգությունը և այլ հանրային ներդրումները: Կարող են հետաքրքրված լինել զբոսաշրջության ոլորտի հետ կապված վերապատրաստման և աշխատանքի հնարավորությունների հարցում:	քննարկումներ, աշխատաժողովներ և շնորհանդեսներ
Տեղական բնակչություն Ծագրի ազդակիր տարածքի հարակից բնակավայրերի բնակիչները կարող են ենթարկվել շինանյութերի տեղափոխության, աղմուկի, թրթռման, օդի աղտոտման և ճանապարհի անվտանգության կամ շինարարությանն առնչվող այլ ազդեցությունների:	Հետաքրքրված են աշխատանքի հնարավորություններով, շահագրգռված են օգտվելու այն տնտեսական հնարավորություններից, որոնք ծրագիրը կարող է բերել համայնքներին, Կարող են ենթարկվել հողի օգտագործման / մուտքի սահմանափակման, ժամանակավոր կամ մշտական հողի օտարման ազդեցության:	Հանրային քննարկումները, Ֆոկուս-խմբային քննարկումներ Ծրագրային փաստաթղթերի հանրայնացում (Ներառյալ ԲՍ փաստաթղթերը) Իրազեկում ԶԼՄ-ներով Տեղական կապի համակարգող Անհատական հանդիպումներ
Զբոսաշրջիկներ Զբոսաշրջիկն այն անձն է, ով բնակության վայրից մեկնում է այլ քաղաք, շրջան և երկիր բիզնեսի, հաճույքի, հանգստի, կրթության,	Հետաքրքրված են դեպի տեսարժան վայրեր մուտքի և ծառայությունների բարելավմամբ, ուժեղացված անվտանգային պայմաններով և ավելի լավ ընդհանուր փորձառության հնարավորությամբ: Հետաքրքրված են էկոլոգիապես մաքուր	ԶԼՄ-ներ Բաներներ Գրավոր տեղեկատվության տարածում

արվեստի, ժառանգության կամ մշակութային նպատակներով: Այսպիսով, բոլոր զբոսաշրջային վայրերը պետք է լինեն գրավիչ՝ համապատասխան ենթակառուցվածքով, կանաչ և էկոլոգիապես մաքուր՝ օտար, ինչպես նաև ներքին զբոսաշրջիկներին գրավելու համար:	զբոսաշրջության տարբերակներով և կայուն գործելակերպերով, որոնք նվազագույնի են հասցնում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը: Կարող են մուտքի սահմանափակման ազդեցության ենթարկվել Ծրագրի պատճառով:	Նախազգուշական նշաններ և պատնեշներ
Երիտասարդություն	Շահակիրների այս խումբը կարող է օգուտ քաղել բարելավված կապի և հիմնական տեսարժան վայրերի հասանելիությունից՝ կանաչ այլընտրանքային փոխադրամիջոցներով (էլեկտրական ավտոբուսներ, հեծանվավազք և այլն):	Հանրային քննարկումներ, գրավոր տեղեկատվության տարածում
Փոքր եւ միջին ձեռնարկությունները, որոնք գտնվում են գոյություն ունեցող և միացնող ճանապարհների կամ շինհրապարակների մոտ/կողքին և դրանց աշխատակիցները.	Շահակիրների այս խումբը կարող է օգուտ քաղել բարելավված կապի և հիմնական տեսարժան վայրերի հասանելիությունից՝ կանաչ այլընտրանքային փոխադրամիջոցներով(էլեկտրական ավտոբուսներ, հեծանվավազք և այլն):	Հանրային քննարկումներ, անհատական հանդիպումներ, գրավոր տեղեկատվության տարածում
Պոտենցիալ խոցելի և մարգինալացված խմբեր		
Աղքատության մակարդակից ցածր ապրող ընտանիքներ, թոշակառուների գլխավորությամբ տնային տնտեսություններ առանց աջակցության, միայնակ ծնողներ, կին գլխավորով տնային տնտեսություններ, առանց աշխատող մեծահասակների, բազմազավակ ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող անձինք	Կարող են դժվարություններ ունենալ տեղեկատվության հասանելիության կամ հասկանալու առումով, Ծրագրի ԲՆՍ ասպեկտների վերաբերյալ արձագանքելու կամ իրենց իրավունքները պաշտպանելու համար հատուկ օգնության կարիք կարող են ունենալ: Կարող են հետաքրքրվել ժամանակավոր աշխատանքի հնարավորություններով:	Հանրային հանդիպումներ Նպատակային հատուկ միջոցառումներ (հանդիպումներ), Անհատական հանդիպումներ, գրավոր տեղեկատվության տարածում, Խորհրդատվական աջակցություն
Տեղահանված անձինք	Առաջարկվող ծրագրային տարածքին մոտ գտնվող բնակավայրերում տեղակայված անձինք Լեռնային Ղարաբաղից	Հանրային հանդիպումներ Նպատակային հատուկ միջոցառումներ (հանդիպումներ),

		Անհատական հանդիպումներ, գրավոր տեղեկատվության տարածում, Խորհրդատվական աջակցություն
Շինարարական տեղամասերի մոտ բնակվող **երեխաներ**	Կարող են ենթարկվել շինարարական տեղամասերի հետ կապված երթևեկության վտանգին և ճանապարհի անվտանգության վերաբերյալ տեղեկատվության կարիք ունեն	Հանրային քննարկումներ, գրավոր տեղեկատվության տարածում, Նախազգուշական նշաններ և պատնեշներ
Հետաքրքրված կողմեր		
Էկոնոմիկայի նախարարություն եվ ԶԿ	ԷՆ-ն և ԶԿ-ն ուղղակիորեն շահագրգռված են զբոսաշրջության ենթակառուցվածքների առաջխաղացմամբ և կլաստերի զարգացման պլանների (ԿԶԾ) և հարակից վերլուծական հետազոտությունների պատրաստմամբ՝ ՀՀ կառավարության կլաստերային մոտեցման համաձայն, Հետաքրքրված են ԿԶԾ-երն ազգային և տարածաշրջանային զարգացման ռազմավարությունների հետ համահունչ դարձնելու հարցով՝ զբոսաշրջությունը խթանելու համար, Շահագրգռված են զբոսաշրջության նախաձեռնություններում համայնքի ներգրավմամբ և սեփականության զգացողության խթանմամբ:	Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ, գրավոր տեղեկատվության տարածում, Էլ-փոստ/ նամակներ/հեռախոսային զանգեր
Շրջակա միջավայրի նախարարություն (ՇՄՆ) Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ (Բնապահպանական փորձաքննական պետական մարմին) Անտառային կոմիտեն և «Հայանտառ» ՊՈԱԿ	Ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը. ՇՄՆ-ն, իր հիմնական ստորաբաժանումների միջոցով, ունի վարչական իրավասություն՝ շրջակա միջավայրի պահպանության օրենսդրության համաձայն ծրագրի հաստատման գործընթացների նկատմամբ: Նա պատասխանատու է ՇՄԱԳ-ի փորձաքննության համար	Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ, գրավոր տեղեկատվության տարածում, Էլ-փոստ/ նամակներ/հեռախոսային զանգեր
Կադաստրի կոմիտե	Վարում է անշարժ գույքի պետական ռեգիստրը, նպաստում հողային քաղաքականության մշակմանը և իրականացմանը: Կոմիտեի հետ	Խորհրդատվական հանդիպումներ Էլ-փոստ/

	համագործակցությունը կարևոր է հողի օտարման հարցում	նամակներ/հեռախոսային զանգեր
Կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարություն	Հայաստանի պատմամշակութային վայրերի պատասխանատու մարմինն է: Հետաքրքրված է տեղական պատմական և մշակութային վայրերի վրա ազդեցություններից խուսափելու հարցում: Կառնչվի Ծրագրին, եթե շինարարության ընթացքում հնարավոր պատահական գտածոներ լինեն	Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ, գրավոր տեղեկատվության տարածում, էլ-փոստ/ նամակներ/հեռախոսային զանգեր
Մարզպետարաններ	Հիմնական շահագրգիռ կողմն է մարզային մակարդակում իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ խորհրդակցությունների առումով: Հետաքրքրված են ծառայությունների մատուցման և ենթակառուցվածքների ընդլայնմամբ՝ բարելավելու իրենց մարզային ընդհանուր կենսունակությունն ու գրավչությունը: Հետաքրքրված են ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմամբ՝ տեղական զբոսաշրջային առաջարկներն արդյունավետ կառավարելու և խթանելու նպատակով	Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ, գրավոր տեղեկատվության տարածում, էլ-փոստ/ նամակներ/հեռախոսային զանգեր
Գործընկերներ		
Մասնավոր հատված (Ներդրողներ եւ ձեռներեցներ) Մասնավոր ներդրողների ցանկը, որոնք պետք է ներգրավվեն որպես շահակիրներ, կմշակվի հետագայում, Ծրագրի իրականացման ընթացքում, երբ յուրաքանչյուր կլաստերի համար կնույնականացվեն առանձնահատուկ միջամտությունները:	Նպատակը մասնակցությունն է զբոսաշրջային կլաստերների զարգացմանը և խթանմանը՝ բիզնեսի հնարավորությունների ավելացման համար: Հետաքրքրվածություն մասնավոր հատվածի ներգրավմամբ՝ զբոսաշրջության նախաձեռնություններում համագործակցության և ներդրումների ընդլայնման համար:	Հանրային քննարկումներ, Ֆոկուս-խմբային քննարկումներ Ծրագրային փաստաթղթերի հանրայնացում (Ներառյալ ԲՍ փաստաթղթերը) Իրազեկում ԶԼՄ-ներով Տեղական կապի համակարգող Անհատական հանդիպումներ

2.3. Այլ հետաքրքրված կողմեր

Ծրագրի շահակիրները ուղղակի ազդեցության ենթակա համայնքներից և/կամ կողմերից բացի ներառում են նաև այլ կողմեր (Աղյուսակ 3)։ Այդ թվում՝

- Հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ) և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ-ներ)՝ ՈՒԿԳ-ներ,
- Գիտակրթական գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ՝ Հայաստանի տարբեր համալսարանների զբոսաշրջության ֆակուլտետներ և զբոսաշրջության ուսանողներ,
- Տեղական ԶԼՄ-ներ, որոնք լուսաբանում են շինարարական աշխատանքներն ու այլ գործողությունները Ծրագրի շրջանակներում։

Աղյուսակ 3. ԶՄԵԾ-ի այլ հետաքրքրված կողմերը

Շահակիրի անունը	Հետաքրքրությունը	Շահակիր խմբի նկարագրությունը
Ազգային ՀԿ-ներ: Ազգային ՀԿ-ներ՝ «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի», «Հայաստանի թռչուններ» ծրագիր, «Հակոբյան» Շրջակա միջավայրի կենտրոն, Կովկասի բնապահպանական ՀԿ ցանց - հայաստանյան գրասենյակ, «Armenian Birdwatching Association», (AWP) WWF Հայաստան, ԷԿՈԼՈՒՐ տեղեկատվական ցանց, Հազարաշեն էթնոլոգիական հետազոտությունների հայկական կենտրոն (ՅՈՒՆԵՍԿՕ-ի հավատարմագրված ՀԿ), Հայկական ճարտարապետության հետազոտությունների հիմնադրամ, Մշակութային ժառանգության տարածաշրջանային կենտրոն, «Փոփոխության արահետներ» զբոսաշրջային ՀԿ, Կայուն զբոսաշրջության զարգացում Հայաստանում ՀԿ և մյուսները։ Տարածաշրջանային և տեղական ՀԿ-ներ և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններ, օրինակ՝ Սիսիանի զբոսաշրջության կենտրոն; Սիսիանի կանանց ռեսուրս կենտրոն հիմնադրամ; Կապանի կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ, Խուստուփ բնապահպանական ՀԿ, Էկոլոգիական անվտանգություն և	Խորհրդակցություններ առանձնահատուկ թեմաների շուրջ, ինչպիսիք են կենսաբազմազանությունը, գենդերային խնդիրները կամ մշակութային ժառանգությունը. ՀԿ-ների հետ սերտ համագործակցությունը Ծրագրին թույլ կտա ապահովել ավելի հարթ հաղորդակցություն բնակիչների հետ և կազմակերպել առավել ներառական հանրային լսումներ։	Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ, Գրավոր տեղեկատվության տարածում, Էլ-փոստ/ նամակներ/հեռախոսային զանգեր

ժողովրդավարություն ՀԿ, Քաջարանի գենդերային հիմնախնդիրների համատիրություն, «Էքսկուրսավարներ հարավից» զբոսաշրջության զարգացման ՀԿ, Սյունիքի զարգացման ՀԿ, Գորիսի զարգացման կենտրոն ՀԿ, Կայուն զարգացման ՀԿ, Շիրակ կենտրոն ՀԿ, Դիլիջանի երիտասարդական համագործակցության կենտրոն ՀԿ, Շեն ՀԿ, Հույսի կամուրջ ՀԿ, Արփա հիմնադրամ		
Կրթական հաստատություններ Բրյուսովի պետական համալսարանի զբոսաշրջության ֆակուլտետ, Երևանի պետական համալսարանի սերվիսի ֆակուլտետ (ԵՊՀ), Ավարտական վկայագրով զբոսաշրջության և հյուրընկալության դասընթաց Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ)	Այս խումբը կարող է աջակցող լինել և արժեքավոր ներդրումներ ունենալ ԿԶԾ-երի մշակման ընթացքում	Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ, Գրավոր տեղեկատվության տարածում, էլ-փոստ/ նամակներ/հեռախոսային զանգեր
ՈՒԿԳ-ներ Ընտրված առաջնահերթ կլաստերների տարածքում ներկայումս գործում են հետևյալ մասնավոր ՈՒԿԳ-ները՝ 1. Գորիսի կլաստեր – Սյունիքի ՈՒԿԳ 2. Գյումրի կլաստեր – Շիրակի ՈՒԿԳ 3. Դիլիջանի կլաստեր - Go To Dili ՈՒԿԳ տավուշի մարզում (Արենիի, Ջերմուկի, Եղեգիսի և Դվինի կլաստերներում ՈՒԿԳ-ներ չեն գործում ներկայումս)	Այս խումբը կարող է մեծապես շահագրգռված լինել մասնակցելու այս գործունեությանը, քանի որ ենթակառուցվածքների բարելավումը կարող է նպաստել հնարավորությունների ընդլայնմանը:	Աշխատաժողովներ Հանրային հանդիպումներ Անհատական հանդիպումներ, Գրավոր տեղեկատվության տարածում, էլ-փոստ/ նամակներ/հեռախոսային զանգեր

Տեղական լրատվամիջոցներ Արարատի մարզ (Դվինի կլաստեր)- «Արարատ», «Արտաշատ» թերթեր: **Շիրակի մարզ (Գյումրի կլաստեր)-** «Գալա», «Շանթ», «Ցայգ» հեռուստաալիքներ, «Ռադիո հայ Գյումրի» ռադիոալիք: **Սյունիքի մարզ (Գորիսի կլաստեր)-** «Գորիսի մանկական ակումբ», «Գորիսի երիտասարդական «Շարավիդ» ակումբ, «Սիսիան ինֆո» ինտերնետային էջեր, «Բան և գործ», «Զանգեզուր», «Որոտան», «Սյունյաց երկիր» թերթեր, «Զանգեզուր», «Սյունիք» հեռուստաընկերություններ. **Վայոց ձորի ու Տավուշի մարզերում տեղական լրատվամիջոցներ չկան (Արենի, Եղեգիս ու Դիլիջան կլաստերներ)**	Լրատվամիջոցների հետ արդյունավետ համագործակցությունը կարող է ապահովել Ծրագրի վերաբերյալ լայն հանրային իրազեկում: Տեղական լրատվամիջոցները հետաքրքրված են հարցազրույցների և ռեպորտաժների թարմ նյութերով:	Հարցազրույցներ Մամուլի հաղորդագրություններ Գրավոր տեղեկատվության տարածում, էլ-փոստ/ նամակներ/հեռախոսային զանգեր

2.4. Անապահով կամ խոցելի խմբեր

Ծրագրի շրջանակներում խոցելի և/կամ անապահով խմբերը ներառում են մարդկանց, ովքեր հանգամանքների բերումով կարող են ենթակա լինել Ծրագրի գործողությունների անհամաչափ ազդեցությանը և/կամ ունեն Ծրագրից դուրս մնալու ավելի մեծ ռիսկ քան այլ խմբերի ներկայացուցիչներ (Աղյուսակ 4):

Այս խմբերը կարող են ներառել, բայց չսահմանափակվել, հետևյալով.

- Հաշմանդամություն ունեցող անձինք
- Տարեցներ, հատկապես նրանք, ովքեր ապրում են միայնակ
- Կին գլխավորով տնային տնտեսություններ
- Բազմազավակ ընտանիքներ
- Էթնիկ փոքրամասնություններ
- Փախստականներ

Աղյուսակ 4. Պոտենցիալ խոցելի և մարգինալացված խմբեր

Շահառուների խումբ	Հետաքրքրություն/խոցելիություն	Ներգրավման ձևը
Աղքատության մակարդակից ցածր ապրող ընտանիքներ, թոշակառուների գլխավորությամբ տնային տնտեսություններ առանց	Կարող են դժվարություններ ունենալ տեղեկատվության հասանելիության կամ հասկանալու առումով, կարող են կարիք ունենալ Ծրագրի ԲԻՍ ասպեկտների վերաբերյալ հետադարձ կապ տրամադրելու կամ իրենց իրավունքները պաշտպանելու	Հանրային հանդիպումներ, Հատուկ միջոցառումներ Անհատական հանդիպումներ,

աջակցություն, միայնակ ծնողներ, կին գլխավորով տնային տնտեսություններ, առանց աշխատողի մեծահասակներ, բազմազավակ ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող անձինք	հարցում: Կարող են հետաքրքրվել ժամանակավոր աշխատանքի հնարավորություններով:	Գրավոր տեղեկատվության տարածում, Խորհրդատվական աջակցություն
Տեղահանված անձինք - Արցախից եկած մարդիկ, ովքեր բնակվում են առաջարկվող Ծրագրի տարածքներին մոտ	Կարող են հետաքրքրվել ժամանակավոր աշխատանքի հնարավորություններով:	Հանրային հանդիպումներ, Հատուկ միջոցառումներ Անհատական հանդիպումներ, Գրավոր տեղեկատվության տարածում, Խորհրդատվական աջակցություն
Երեխաներ, ովքեր բնակվում են առաջարկվող Ծրագրի տարածքներին մոտ	Կարող են ենթարկվել դեպի Ծրագրի շինհրապարակներ և դուրս երթևեկության հետ կապված ռիսկերին և կարիք ունեն ճանապարհային անվտանգության վերաբերյալ համապատասխան տեղեկատվության	Հանրային հանդիպումներ, Գրավոր տեղեկատվության տարածում, Նախազգուշացնող նշաններ և պատնեշներ

Անհրաժեշտության դեպքում Ծրագրի ազդեցության տակ գտնվող համայնքների խոցելի խմբերին կարելի է բացահայտել և խորհրդատվություն տրամադրել հատուկ միջոցների կիրառմամբ: Մոտեցումները և/կամ ներկայացուցչական կազմակերպությունները, որոնք կարող են ներգրավվել որպես գործընկերներ այս խմբերին ներգրավելու համար, նույնպես կբացահայտվեն Ծրագրի իրականացման վաղ փուլերում: Ներգրավման մեթոդները, որոնք կկիրառվեն Ծրագրի կողմից, ուրվագծված են հետևյալ բաժիններում:

Տարածաշրջանի/համայնքի զբոսաշրջության զարգացմանն առնչվող սոցիալ-տնտեսական հարցերի քննարկման ժամանակ կանանց մասնակցային ներգրավվածությունն ապահովելու, ինչպես նաև զբոսաշրջությամբ զբաղվող տեղական գործարար համայնքի ներկայացուցիչներին զբոսաշրջության ոլորտին առնչվող հիմնական խոչընդոտները և հիմնական ուղղությունները բացահայտելու համար Ծրագրի նախապատրաստման փուլում իրականացվել են ներգրավման միջոցառումներ, որոնք ներկայացված են 3.2 բաժնում:

2.5. Ներգրավման եղանակները

ԶՄԵԾ-ն ունի բազմաթիվ շահագրգիռ կողմեր՝ սկսած ազգային մակարդակի նախարարություններից մինչև համայնքային և խոցելի խմբեր: Այս դերակատարների ներգրավումն

օգնում է. 1) կառուցել ընդհանուր փոխըմբռնում և տեսլական այս բոլոր հիմնական շահակիրների միջև. 2) հասկանալ կարողությունների բացերը և համապատասխանաբար արձագանքել. և 3) համակարգել առնչվող բոլոր նախաձեռնությունները և վարել տեխնիկական բանավեճեր:

Ակնկալվում է, որ տարբեր խմբերի շահակիրների ներգրավման մեխանիզմները կներառեն, բայց չեն սահմանափակվի, հանրային խորհրդատվություններով, հարցազրույցներով և ֆոկուս խմբերի քննարկումներով, ներառյալ իրազեկումը, որպեսզի ստեղծվեն ապահով հարթակներ՝ մտահոգություններն արտահայտելու համար:

Ծրագիրն ի սկզբանե կընդունի մասնակցային մոտեցում՝ ապահովելով տեղական լայն ներգրավում ԿԶԾ-երի զարգացման գործում: Կներգրավվեն զբոսաշրջության առանցքային ոլորտների ներկայացուցիչներ, որոնք տրամադրում են կացարան, զբաղվում են սննդի կազմակերպմամբ, ներկայացնում են զբոսաշրջային գործակալություններ և իրականացնում են տրանսպորտային ծառայություններ, կենտրոնանալով կանանց, երիտասարդների և ընտանեկան բիզնեսի վրա: Նրանց պատկերացումները, որոնք հավաքվել են խորհրդատվությունների ընթացքում, կընդգրկվեն մշակված զարգացման ռազմավարություններում՝ ապահովելով համապատասխանություն և արդյունավետություն: Բացի այդ, փաստաթղթավորելով էական մանրամասներ, ինչպիսիք են տարիքը, սեռը, մասնագիտացումը և կոնտակտային տվյալները, Ծրագիրը կխթանի այս շահագրգիռ կողմերի հետ շարունակական կապերը՝ խրախուսելով նրանց ակտիվ մասնակցությունը ապագա գործունեությանը և աջակցելով տեղական զբոսաշրջության էկոհամակարգում մասնագիտական ցանցերին:

Սքրինինգի ընթացքում կբացահայտվեն ազդակիր համայնքների խոցելի խմբերը, օրինակ՝ կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները, էթնիկ փոքրամասնությունները, հաշմանդամություն ունեցող անձինք, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները և այլն: Այս խմբերը բովանդակալից խորհրդատվության կարիք ունեն: Շահակիրների բովանդակալից ներգրավումը կիրականացվի խորհրդատվությունների, համագործակցության և շահակիրների լիազորությունների ամրապնդման, ինչպես նաև երկկողմանի հաղորդակցության միջոցով: Այս խմբերի համար կպատրաստվեն և կտարածվեն հատուկ տեղեկատվական և հաղորդակցման նյութեր: Այս խմբերի ներկայացուցիչների կամ առանձին մարդկանց հետ կարող են կազմակերպվել ֆոկուս խմբային քննարկումներ, կլոր սեղանի քննարկումներ և առանձին հանդիպումներ՝ բացահայտելու իրենց կարծիքը Ծրագրի վերաբերյալ, մտահոգությունները և Ծրագրում ընդգրկվելու կարիքները: Մտահոգությունները և առաջարկությունները պետք է հնարավորինս հաշվի առնվեն մանրամասն նախագծերի մշակման ժամանակ և հետադարձ արձագանք տրամադրվի շահագրգիռ կողմերին:

Համապատասխան տեղեկատվության հայերենով նախապես հրապարակումը թիրախային խմբերին հասանելի ձևաչափով կիրականացվի հանրային խորհրդատվություններից, հարցազրույցներից և/կամ ֆոկուս խմբերի քննարկումներից առաջ: Սա կներառի նաև Բողոքների մեխանիզմի (ԲՄ) հասանելի ալիքների բացահայտումը: Շահագրգիռ կողմերից ստացված կարծիքները և առաջարկությունները հաշվի կառնվեն և կարտացոլվեն Ծրագրի գործողություններում: Դրանք կգրանցվեն ԲՄ-ի ընթացակարգով, կքննարկվեն և հնարավորինս հաշվի կառնվեն, նույնիսկ եթե դրանք կարող են հանգեցնել նախագծի փոփոխության:

ԿԶԾ-երի մշակման հետ կապված ներգրավումը հանդիսանում է հանրային քննարկման և խորհրդատվությունների գործընթացի մաս. շահակիրների կարծիքը պետք է ստանալ ԿԶԾ-երն ընդունելուց առաջ:

Ծրագիրը կօժանդակի համայնքապետարանների կողմից համայնքային մակարդակում ՏԱԽ-ի ստեղծմանը, որը կներառի ոչ միայն տեղական ներկայացուցիչներ ու համայնքների ղեկավարներ, այլև նաեւ տեղական ՀԿ-ներ, առաջադրված ակտիվ բնակիչներ ու մասնավոր հատված: Այս հարթակը ծառայելու է կանանց ակտիվ մասնակցությունը և ներկայացվածություն ապահովելուն: Որոշումներ կայացնելու դերերում կանանց մասնակցությունը մեծացնելու և ԿԶԾ-երում նրանց տեսակետները նույնպես հաշվի առնելու համար, կանանց ներկայացվածությունը ՏԱԽ-երում կկազմի առնվազն 30 տոկոս: ՏԱԽ-ի բնույթը պետք է ներկայացվի ԿԶԾ-երի նախապատրաստման ընթացքում՝ որպես խորհրդատվական խումբ, որը խորհուրդ կտա և կուղղորդի ԿԶԾ-ի զարգացումը, կամուրջ կհանդիսանա համայնքի և կապալառուների միջև Ծրագրի իրականացման փուլում: Այսպիսով, կանանց ընդգրկումը ՏԱԽ-երում ոչ միայն արդարության խնդիր է, այլ նաև ռազմավարական մոտեցում համայնքների զարգացման ջանքերի արդյունավետությունն ու ներառականությունը բարձրացնելու համար: Կանանց մասնակցությունը բերում է տարբեր հեռանկարների, անդրադառնում է գենդերային հատուկ մտահոգություններին, ուժեղացնում է տեղական սեփականության զգացումը, հզորացնում է անհատներին, բարելավում է սոցիալական համախմբվածությունը և ապահովում ներկայացվածություն և շահերի պաշտպանություն:

Միևնույն ժամանակ, տեղական ՀԿ-ների, հատկապես գենդերային, սոցիալական խոցելիության և երիտասարդության հարցերով զբաղվող ՀԿ-ների բացահայտումը կենսական նշանակություն կունենա: Իդեալական դեպքում կանանց կողմից ղեկավարվող այս կազմակերպությունները կարող են արժեքավոր հեռանկարներ առաջարկել համայնքային մարտահրավերների վերաբերյալ, նպաստել ֆոկուս խմբերի քննարկումներին և ապահովել, որպեսզի մարգինալացված ձայները լսելի դառնան: Այն տարածքներում, որտեղ բացակայում են տեղական ՀԿ-ները, ջանքերը կկենտրոնանան համապատասխան փորձ ունեցող ակտիվ կանանց, երիտասարդների կամ տարածաշրջանային ՀԿ-ների ներգրավման վրա: Նրանց ներգրավվածությունը ոչ միայն կնպաստի Ծրագրի գիտելիքների ներկայացմամբ, այլև կաջակցի Ծրագրի սոցիալական և գենդերային ազդեցությունների մշտադիտարկմանը՝ ապահովելով, որ ներառականությունը մնա որպես հիմնական սկզբունք ողջ նախաձեռնության ընթացքում:

3. ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը նպատակ ունի խթանել բովանդակալից խորհրդատվությունները վերը նշված շահակիրների հետ, մասնավորապես նրանց հետ, որոնց վրա կարող են բացասաբար ազդել՝ մասնակցային և ներառական գործընթացի միջոցով հնարավոր ազդեցություններից խուսափելու և/կամ մեղմելու նպատակով: Ստորև ներկայացված են Ծրագրի պատրաստման ընթացքում և Ծրագրի իրականացմանը նպաստելու նպատակով ձեռնարկված ներգրավման աշխատանքները:

3.1. Շահակիրների ներգրավման գործունեության ամփոփում ծրագրի նախապատրաստման եւ իրականացման ընթացքում

Ծրագրի նախապատրաստման ընթացքում ՀՏՋՀ-ում ծրագրի թիմը (ԾԹ) հետագայում ևս կբացահայտի անհատներին կամ խմբերին, ովքեր կարող են ունենալ տարբեր մտահոգություններ և առաջնահերթություններ Ծրագրի ազդեցությունների, մեղմացման մեխանիզմների և օգուտների վերաբերյալ, և ովքեր կարող են պահանջել ներգրավման տարբեր կամ առանձին ձևեր և հաղորդակցման տարբեր մեթոդներ:

ՇՆՊ-ն վերջնական տեսքի բերելուց և հաստատվելուց հետո, այն կթարմացվի երկու տարին մեկ՝ արտացոլելու Ծրագրի ցանկացած փոփոխություն, ինչպես նաև շահակիրների և նրանց շահերի ու ազդեցությունների հնարավոր փոփոխությունները:

Այս ՇՆՊ-ն մշակվել է Ծրագրի բնույթին և մասշտաբին, ինչպես նաև դրա հնարավոր ռիսկերին և ազդեցություններին համաչափ: ՇՆՊ-ի նախագիծը կհրապարակվի հնարավորինս շուտ, նախքան Ծրագրի գնահատումը, շահակիրների կարծիքը հավաքելու համար, ներառյալ հետադարձ կապը շահակիրների նույնականացման և ապագա ներգրավման վերաբերյալ առաջարկները: Եթե ՇՆՊ-ում էական փոփոխություններ կատարվեն, թարմացված տարբերակը նույնպես կհանրայնացվի: Ծրագիրն իր գործունեության ողջ ընթացքում կիրականացնի ներգրավման աշխատանքներ: Նախատեսվող ՇՆ գործունեության մանրամասն նկարագրությունը տրված է Հավելված 2-ում:

3.2. Գենդերային հիմնախնդիրների ուսումնասիրությունը եւ քաղաքացիների ներգրավումը Ծրագրի նախապատրաստման փուլում

Տարածաշրջանի/համայնքի զբոսաշրջության զարգացմանն առնչվող սոցիալ-տնտեսական հարցերի քննարկման ժամանակ կանանց մասնակցային ներգրավվածությունը ապահովելու, ինչպես նաև զբոսաշրջությամբ զբաղվող տեղական գործարար համայնքի ներկայացուցիչներին զբոսաշրջության ոլորտին առնչվող հիմնական խոչընդոտները և հիմնական ուղղությունները բացահայտելու համար Ծրագրի նախապատրաստման փուլում իրականացվել են ներգրավման միջոցառումներ, որոնք ներկայացված են ստորև:

Մայիսի 24-ին Զում-քննարկում է անցկացվել ՈՒԿԳ-ների հետ: Չորս ՈՒԿԳ-ների (Գորիս, Դիլիջան, Գյումրի և Եղեգնաձոր) կին-մենեջերները ներկայացրել են իրենց մարզերում/քաղաքներում զբոսաշրջության հետ կապված ոլորտների ընդհանուր խնդիրներն ու տեղական առանձնահատկությունները՝ ընդգծելով կանանց, երիտասարդների, տարեցների աշխատանքի հնարավորությունները և նրանց մասնագիտական գիտելիքների բացթողումները:

Առաջարկություններն ամփոփվել են ըստ երկու խմբերի՝ մարզերին հատուկ (Սյունիք, Տավուշ, Շիրակ և Վայոց Ձոր) և ընդհանուր բնույթ կրող զբոսաշրջության ողջ ոլորտի համար:

Հունիսի 21-ին տեղի ունեցավ Zoom-քննարկում WINNET-ի անդամների հետ (Women Resource Centres NGOs Network, https://winnetarmenia.org/en): WINNET-ի անդամ 7 ՀԿ-ների հիմնադիրները/ղեկավարները քննարկել են զբոսաշրջության հետ կապված ոլորտներում կանանց աշխատանքի մասնակցությունը և ձեռներեցությունը խթանելու անհրաժեշտ միջոցառումները: Մասնակիցները կարևորեցին նաև WINNET Armenia ցանցի դերը կանանց և սոցիալապես անապահով մարդկանց զբաղվածությանն աջակցելու գործում՝ ներառյալ սոցիալական ձեռնարկությունների ստեղծման միջոցով (ձեռագործ աշխատանքներ, հուշանվերներ, վարպետության դասեր և այլն):

2024 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին հարցում է անցկացվել զբոսաշրջության զարգացման 7 կլաստերների գործարար համայնքի (որպես զբոսաշրջության փորձագետների) շրջանում: 116 բիզնես-կազմակերպությունների ցուցակները՝ իրենց ղեկավարների կոնտակտներով, տրամադրվել են 4 ՈՒԿԳ-ների և 2 մարզպետարանների կողմից (Արարատի և Արագածոտնի մարզպետարաններ): Հարցմանը ենթակա բիզնես կազմակերպությունների ընտրությունն իրականացվել է՝ հիմնվելով ա) զբոսաշրջության հետ կապված բիզնեսների դիվերսիֆիկացիայի վրա և բ) ընտրված ձեռնարկությունների կողմից հարցաթերթ լրացնելու պատրաստակամության վրա: Հարցումն իրականացվել է էլեկտրոնային փոստի միջոցով՝ նախնական մշակված հարցաշարի հիման վրա: Հարցման մասնակիցներից մի քանիսի ինտերնետային/հաղորդակցական խնդիրների պատճառով անցկացվել է 4 հարցազրույց հեռախոսով: Ընդհանուր առմամբ, լրացվել է 34 հարցաթերթ, ստեղծվել է հարցման տվյալների բազան և օգտագործվել ամփոփ աղյուսակների պատրաստման և տվյալների վերլուծության համար:

Հայտնաբերված բացերը շտկելու համար Ծրագիրը նպատակ ունի ստեղծել ներառական, գենդերային համապատասխան ծրագրեր, որոնք ընդլայնում են հնարավորությունները թե՛ կանանց, թե՛ երիտասարդների համար զբոսաշրջության հետ կապված ոլորտներում՝ որպես աշխատակիցներ և ձեռնարկատերեր: Համագործակցելով տեղական համայնքների, ինքնակառավարման մարմինների և տարբեր կազմակերպությունների հետ՝ Ծրագիրը կաջակցի զբաղվածության զարգացմանը՝ ներառելով կանանց նախասիրությունները, կարիքները և նախագծային ներդրումները՝ մասնակցային գենդերային ներառական գործընթացի միջոցով:

3.3. Տեղեկատվության հանրայնացում

Ծրագրի առաջընթացին զուգահեռ շահակիրները կտեղեկացվեն՝ ներառյալ Ծրագրի բնապահպանական և սոցիալական կատարողականի և շահակիրների ներգրավման պլանի և ԲՄ-ի իրականացման վերաբերյալ, ինչպես նաև Ծրագրի իրականացման ընդհանուր առաջընթացի մասին հաշվետվությունները:

Ծրագրի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հանրայնացման ժամանակ կկիրառվեն հետևյալ սկզբունքները.

- Ծրագիրը կապահովի, որպեսզի հանրայնացվող տեղեկատվությունը լինի համապարփակ և հեշտ հասանելի, որակյալ և ժամանակին տրամադրվի շահակիրներին,
- Տեղեկությունների բացահայտման գործընթացները կսկսվեն Ծրագրի հենց սկզբում և կշարունակվեն Ծրագրի ողջ շրջափուլում,

- Տեղեկատվության հանրայնացման համար կօգտագործվեն տարբեր տեղեկատվական հարթակներ, ներառյալ պաշտոնական կայքերը, սոցիալական լրատվամիջոցները և այլն:

Տեղեկատվության հանրայնացման նախնական ռազմավարությունը ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Տեղեկությունների հանրայնացման նախնական ռազմավարություն

Ծրագրի փուլ	Թիրախային շահակիրներ	Հանրայնացման երթակա տեղեկություններ	Առաջարկվող մեթոդը եւ ժամանակը
Ծրագրի նախապատրաստում	• Համայնքներ և բնակավայրեր, • Մասնավոր հատված (ներդրողներ և ձեռնարկատերեր), • Մարզային վարչական գրասենյակներ, • Տեղական և ազգային ՀԿ-ներ, • ՈՒԿԳ-ներ, • ԶԼՄ-ներ	ԿԶԾ	• Կլաստերի վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը կտեղադրվի ՀՏԶՀ և ԶԿ կայքերում • Սահիկաշարեր տեղական և մարզային շահակիրների համար
		ԲՍԿԾ	• Կտեղադրվի ՀՏԶՀ-ի կայքում • Հանրային քննարկումներ
		ՇՆՊ	• Կտեղադրվի ՀՏԶՀ-ի կայքում
		ՏԾ	• Կտեղադրվի ՀՏԶՀ-ի կայքում • Հանրային քննարկումներ
		ԲՍՀՊ	• Կտեղադրվի ՀՏԶՀ-ի կայքում • Հանրային քննարկումներ
		ԱԿԸ	• Կտեղադրվի ՀՏԶՀ-ի կայքում
		ԾԿԶ	• Կտեղադրվի ՀՏԶՀ-ի կայքում
Ենթածրագրի նախա-նախագծային	ՏԻՄ-եր, ՔՀԿ-ներ, ՀԿ-ներ ր ՈՒԿԳ-ներ, մասնավոր հատված, տեղացի բնակչություն	▪ Ենթածրագրի ամփոփագրեր	• Ծրագրի գործունեության վերաբերյալ տեղեկատվական թերթիկի տարածում, ներառյալ բաղադրիչների և ենթաբաղադրիչների նկարագրությունը և գործողությունները, • Հանրայնացում ԶԿ և ՀՏԶՀ կայքերում և թիրախային համայնքների կայքերում, սոցիալական ցանցերում, • Հանրային քննարկումներ
Նախագծային	Ընտրված կլաստերների համայնքները, ընտրված մարզերում գործող ՔՀԿ-	1) ՇՄԱԳ համաձայն ՀՀ ՇՄԱԳՓ օրենքի, 2) ԲՍԿՊ-ների և ՏՊ-	• Հանրայնացում ԶԿ և ՀՏԶՀ կայքերում և թիրախային համայնքների կայքերում,

	ներ, ՀԿ-ներ ր ՈՒԿԳ-ներ, ԾԱԵԱ-ներ, ՓՄՁ-ներ, տեղական բնակչություն	ների նախագծեր՝ ՀԲ կողմից հաստատված, 3) ԲՄ ներկայացում, 4) Թարմացված ՇՆՊ, վերջնականացված ԲՍԿՊ-ների հանրայնացում, 5) ԱԿԸ հանրայնացում 6) ՏՊ հանրայնացում, առկայության դեպքում	սոցիալական ցանցերում նախագծի պատրաստման ընթացքում նախքան շինարարության մեկնարկը, • Հանրային քննարկումներ ԲևՍ փաստաթղթերի վերաբերյալ
Նախա-շինարարական	Ընտրված կլաստերների համայնքները, ընտրված մարզերում գործող ՔՀԿ-ներ, ՀԿ-ներ ր ՈՒԿԳ-ներ, ԾԱԵԱ-ներ, ՓՄՁ-ներ, տեղական բնակչություն	1) Շինարարության մեկնարկ	• Շինարարության մեկնարկի ծանուցման հանդիպում • Հայտարարություններ սոցիալական ցանցերով • Հանրային քննարկումներ
Շինարարության	Ընտրված կլաստերների համայնքները, ԾԱԵԱ-ներ, տեղական բնակչություն	1) Ընթացիկ շինարարություն 2) ԲՄ 3) շինարարական աշխատանքների հետ կապված կոմունալ ծառայությունների (ջուր, գազ, հոսանք) ժամանակավոր ընդհատումներ	• ՀՏՁՀ-ի և համայնքապետարանների կայքեր, • Սոցիալական մեդիա Հայտարարություններ քաղաքապետարանների տեղեկատվական վահանակների վրա, • Թերթիկներ
Ծրագրի փակում եւ շահագործում	ԷՆ/ԶԿ, ՀՏՁՀ, մարզպետարաններ, ընտրված կլաստերների համայնքները, ընտրված մարզերում գործող ՔՀԿ-ներ, ՀԿ-ներ ր ՈՒԿԳ-ներ, ընդհանուր հանրություն	Ծրագրի ավարտման հաշվետվություն	• Կհանրայնացվի ԷՆ և/կամ ԶԿ, ՀՏՁՀ և ազդակիր ՏԻՄ-երի կայքերում շինարարական աշխատանքների ավարտից հետո

3.4. Միջոցներ եւ պատասխանատվություն

3.4.1 Կառավարման գործառույթներ եւ պատասխանատվություն

